

«ԲԱԲԱՅԱՆ-ԼԱՏ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՆՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ
ԹԻՎ 2-ՐԴ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

լրամշակված

«Բաբայան-ԼԱՏ Նախագիծ»



Յ. Բաբայան

Բովանդակություն

Էջ

1. Ընդհանուր տեղեկատվություն	4
2. Հավելվածներ.	4
3. Հապավումներ.	5
4. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը.....	5
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ	9
6. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը,.....	10
Նախաձեռնողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը.	10
7.Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը.....	10
8. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը.....	11
8.1. Ենթակա տարածք.....	11
8.2. Շրջակա միջավայրի բնութագրերը	14
8.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.....	14
8.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն.	15
8.2.3. Կլիմա և օդային ավազան.	16
8.2.4. Հողային ռեսուրսներ.	22
8.2.5.Զրային ռեսուրսներ.....	24
8.2.6. Կենսաբազմազանություն	26
8.2.7. Պատմության և մշակութային հուշարձաններ.....	31
8.2.8. Սոցիալ-տնտեսական	35
9. Նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնառեսուրսները(շինարարության և շահագործման, փակման փուլեր	38
9.1 Շահագործման փուլ.	38
9.2.Շինարարության փուլ.	43
9.3 Ժամանակացույց	50
9.4Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.	54
10.Շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջություն վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը(շինարարության և շահագործման փուլերում).	56
10.1 Օդային ավազան.....	56
10.2 Հողային ռեսուրսներ.....	59
10.3 Զրային ռեսուրսներ.	59
10.4 Կենսաբազմազանություն.....	2... 60

10.5 Թափոններ.	60
10.6 Աղմուկ և թրթռում.	62
10.7 Արտակարգ իրավիճակներ.	63
10.8 Պատամաշակութային և բնության հուշարձաններ.	63
10.9. Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.	63
10.10 Էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն.	64
10.11 Լանդշաֆտ.	65
10.12 Բարեկարգում և Կանաչապատում.	65
11.Շրջակա միջավայրի վրա ազդեցության վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը (Բնապահպանական կառավարման պլան). 66	
11.1 Օդային ավազան.	66
11.2. Հողային ռեսուրսներ.	67
11.3.Ջրային ռեսուրսներ.	67
11.4.Թափոններ.	68
11.5.Աղմուկ և թրթռում.	69
11.6.Արտակարգ իրավիճակներ.	70
11.7.Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում, անվտանգություն.	71
Սոցիալական գործոններ.	72
11.8.Էներգաարդյունավետություն և Էներգախնայողություն.	73
11.9.Լանդշաֆտ.	73
11.10.Բարեկարգում և կանաչապատում.	73
12. Մոնիթորինգ.	74
13.Բողոքների ընթացակարգ.	75
14.Փակման փուլ.	75
15. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան.	76
Մարդու առողջություն, Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.	86
Սոցիալական գործոններ.	90
16.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ.	93
Աղյուսակ 10.	93
17. Հանրային քննարկումներ.	98
Գրականություն.	99

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվետվություն	Դպրոցների սեյամիկ անվտանգության բարելավման շրջանակներում՝ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս բնակավայրում թիվ 2-րդ միջնակարգ դպրոցի կառուցում:
Ծրագրի իրականացնող	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (ՀՏԶՀ)
Համավարկավորող	ՀՀ կառավարություն, Ասիական զարգացման բանկ
Նախաձեռնող	«Բաբայան-ԼԱՏ Նախագիծ» ՍՊԸ
Նախաձեռնողի իրավաբանական հասցեն	Ք. Երևան, Տիչինայի 34/1
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ`	Հեռ. 091-34-01-03, 055-14-01-03 babayan-lat@mail.ru
Փաստացի գործունեության տարածք	Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս բնակավայր, 6-րդ փողոց 8
Պատվիրատու	ՀՀ Քաղաքաշինության կոմիտե
Աշխատանքային նախագծի մշակող	«Բաբայան-ԼԱՏ Նախագիծ» ՍՊԸ
Գնահատման հաշվետվության նախագծող	«Նովալ» ՍՊԸ
Հաշվետվության մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Իսահակյան 18 (093)39-77-60 noval-llc@outlook.com

2. Հավելվածներ.

- Հավելված 1.** Տարածքի սեփականության իրավունքի վկայական
- Հավելված 2.** Ճարտարապետա-հատակագծային առաջադրանքը
- Հավելված 3.** Տարածքի գլխավոր հատակագիծը
- Հավելված 4.** Մարտունու համայնքի կողմից տրված ջրի տեխնիկական պայմանը
- Հավելված 5.** Գազամատակարարման պայմանագիր
- Հավելված 6.** Էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանը
- Հավելված 7.** Համայնքապետարանի գրությունները կոյուղագծի և աղբահեռացման վերաբերյալ
- Հավելված 8.** Կանաչապատման հատակագիծ
- Հավելված 9.** Համայնքի նախնական համաձայնությունը
- Հավելված 10.** Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ
- Հավելված 11.** Մթնոլորտային օդի հաշվարկ
- Հավելված 12.** Աղմուկի մակարդակի հաշվարկը

3. Հապավումներ.

(ՄԱԲ)՝ Սեյսմիկ անվտանգության բարելավում

(ԱԶԲ)՝ Ասիական Զարգացման բանկ

(ԱՀՎ)՝ արդյունքների վրա հիմնված վարկավորման մոդել

4. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք՝ – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-521-Ն (ընդունված 19994թ. և լրամշակված 2022թ.՝ՀՕ522)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)-Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)-Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«Բնության հատուկ պահպանվող արածքների մասին» ՀՀ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) - Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության

կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը-(15.05.2001թ.)- կարգավորում է Սևանա լճի, նրա ջրհավաք ավազանի և տնտեսական գործունեության գոտու էկոհամակարգերի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Սահմանում է Սևանա լճի, որպես Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանի՝ բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման, պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)- Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ինդիկսները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության Բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999թ.) -Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.)- կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների

իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

ՀՀ կառավարության որոշումներ

- ❖ ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 29 հունվարի 2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 29 հունվարի 2010թ.՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011թ. «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1622-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 286-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N1396-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ. «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ. «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 31.07.2014թ.՝ ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
- ❖ 18. ՀՀ կառավարության 08.02.2018թ. «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱԶ ԳՈՏԻՆԵՐԻ ԶԱՓԵՐԻՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1318-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 108- Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018թ. «ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՌՈՒՑՎՈՂ (ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ, ՆՈՐՈԳՎՈՂ) ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԷՆԵՐԳԱԽՆԱՑՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԱԱՐԴՑՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N426-Ն որոշում:

5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին /Փոփոխությունները 2023թ/Օրենքի(այսուհետ՝ Օրենք) համաձայն: Գործունեությունները համաձայն Օրենքի դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Հաշվետվությունում նախատեսված գործունեությունը ենթակա է փորձաքննության՝ համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի և ենթակետի, Քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ եւ ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ եւ ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով»: Նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Գնահատման հաշվետվության բովանդակությունը կազմվել է Օրենքի 15-րդ հոդվածի Բ կատեգորիայի նախատեսվող գործունեության՝ ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջներին համապատասխան.

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան.

3) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների նկարագիրը, ինչպես նաև դրանց օգտագործման նպատակը, ենթակառուցվածքները, ազդակիր համայնքը և դրանց տեղադիրքն արտացոլող իրավասու մարմնի տրամադրած տարածական պլանավորման փաստաթղթերը, իրադրության սխեման կամ քարտեզը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող միասնական գեոդեզիական կոորդինատային համակարգով.

4) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության, շահագործման, փակման և հետփակման փուլերում (արտադրական հզորություններ, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).

5) շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները շինարարության, շահագործման և փակման փուլերում.

6) մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

7) նախագծային փաստաթղթով նախատեսված բնապահպանական կառավարման պլանը.

8) հաստատված հիմնադրությային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.

9) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացումը՝ նախագծային փաստաթղթին համապատասխան, բացահայտել գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված միջոցառումները:

Հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

6. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը, Նախաձեռնողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը.

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Բաբայան-Լատ Նախագիծ» ՍՊԸ կողմից, որի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Տիչինայի 34/1:

Թիվ 2 դպրոցի նոր շենքի կառուցումը նախատեսվում է իրականացնել Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս գյուղական բնակավայրի՝ 6-րդ փող.թիվ 8 հասցեում, գոյություն ունեցող դպրոցի տարածքում՝ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում:

Գործունեությունն իրականացվելու է Գեղարքունիքի մարզի Երանոս բնակավայրի վարչական տարածքում՝ 0.87 հա տարածքի վրա: Տարածքի հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման: Գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործում:

Նախատեսվող գործունեության նպատակն է՝ կառուցել համապատասխան ստանդարտներով և ժամանակակից պահանջներով նոր դպրոցի շենք՝ սեյսմիկ անվտանգության բարելավման շրջանակներում:

Նախատեսվող գործունեության նպատակն է՝ կառուցել համապատասխան ստանդարտներով և ժամանակակից պահանջներով նոր դպրոցի շենք՝ սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում: Ծրագրի իրականացնող է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ)՝ ՀՀ կառավարություն, Ասիական Զարգացման Բանկի համավարկավորմամբ:

7. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը

Նախատեսվող դպրոցի վերակառուցման կամ կառուցման հաշվետվությունը մշակված է հիմք ընդունելով.

- դպրոցի կառուցման նախագծային փաստաթղթերը,
- տեղամասի ինժինեռակրաբանական հետազոտությունների հաշվետվությունը,

- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,
- սեփականության վկայականը՝ N 14102015-05-0010: Հավելված 1
- ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N 114 տրված՝ 20.04.2023թ.:
Հավելված 2

8. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը

8.1. Ենթակա տարածք. Դպրոցի կառուցման ենթակա տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղական բնակավայրի վարչական շրջանում, անշաարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման տեսակը՝ անհատույց օգտագործման է: Հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման :


Նախատեսվող գործունեության տարածքը թիվ 2 դպրոցի տարածքն է: Տանիքաձածկը մետաղաթիթեղից է՝ փայտե կոնստրուկցիաների հիման վրա:

Տարածքը մասամբ պարսպապատված է մետաղական ցանցով: Հողամասի մակերեսը 0,87 հա է: Առկա է Արցախյան պատերազմում զոհված ուսուցչի հուշարձան, 10կվտ հզորության օդային զծով ենթակայան:

Համաձայն անշարժ գույքի գրանցման վկայականի տարածքում առկա են հետևյալ մակերեսներով շինությունները.

- Դպրոցի շենքի 1-ին մասնաշենք- 409,9մ²
- Դպրոցի 2-րդ մասնաշենք-599.5մ²
- Դպրոցի 3-րդ մասնաշենք-1064.4մ²
- Դպրոցի 4-րդ մասնաշենք-729.8մ²
- Դպրոցի 5-րդ մասնաշենք-1143.8մ²
- Կաթսայատուն-48մ²

Գծապատկեր 1



Կից գտնվում են՝ փողոցներ, բնակելի, հասարակական կառուցապատման հողամասեր: Դպրոցը գտնվում է միջպետական ավտոճանապարհից 2կմ հեռավորության վրա; Համաձայն «Հայր և Որդի Տիտիզյաններ» ՄՊԸ կողմից տրված ինժեներաերկրաբանական եզրակացության՝ տեղամասը երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների տեսանկյունից պիտանի է կապիտալ շինությունների, բարենպաստ է կառուցապատման համար:

Նկար 1



Համաձայն եզրակացության՝ տեղամասի ուսումնասիրությունը կատարվել է 6 հորատանցքերով՝ 3-ը՝ 8գծ/մ խորությամբ, 3-՝ 12գծ/մ խորությամբ: Հորատանցքների հիման վրա կազմվել է երկրաբանա-լիթոլոգիական կտրվածք, ինչպես նաև օգտագործվել են ֆոնդային տվյալները:

Ուսումնասիրվող տարածքի կլիման ունի խիստ ցամաքային կլիմա՝ ցուրտ ձմեռով և զով ամառով: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը հասնում է 34°C, օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է -32°C, օդի հարաբերական խոնավությունը կազմում է 68%, տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 522մմ, գերակշռում են տարեկան 2,6մ/վրկ միջին արագության քամիները, 25 տարվա ընթացքում մեկ անգամ հնարավոր են 25մ/վրկ ուժգնության քամիներ: Գրունտի սառչելու առավելագույն խորությունը կազմում է 114 սմ, ձյան ծածկույթի տևողությունը՝ 103 օր:

Ռելիեֆ, ֆիզիակա-աշխարհագրական պայմանները, մորֆոլոգիական կառուցվածք և հիդրոերկրաբանական պայմաններ Հետազոտվող տարածքը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելյան մասում, Գեղարքունիքի մարզում:

Ուսումնասիրվող տարածքը գտնվող է Գեղարքունյաց լեռնաշղթայի հարավարևելյան ստորոտին, Ձագ գետի ստորին հոսանքում, մարզկենտրոն Գավառից 25 կմ հարավ-արևելք: Շրջանը օրոգրաֆիայի տեսակետից նկարագրվում է որպես լեռնային շրջան, իրեն բնորոշ մասնատված ռելիեֆով (խիստ քայքայված Ս-անման ձորակներ, փոքր հովիտներ, աստիճանաձև լեռնային ռելիեֆ):

Տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են Չորորդական հասակի լավաները, ներկայացված՝ անդեզիտային բազալտներով, անդեզիտներով, անդեզիտային դացիտներով և դացիտներով: Այս ապարները գտնվում են խորը հորիզոններում: Նրանց արտաքին շերտերը հիմնականում ծածկված են դելյուվիալ և պրոյուվիալ ծագման նստվածքներով, իսկ լճափնյա հատվածում հիմնականում ծածկված են լճային ալյուվիալ-դելյուվիալ ծագման նստվածքներով, որոնք ներկայացված են ավազակավերով, խճավազային գրունտներով, ավազներով և գլաքարա-գետաքարերով:



Համաձայն կատարված ուսումնասիրության արդյունքների, հորատման և արխիվային նյութերի տվյալների՝ հետազոտվող տեղամասի երկրաբանա-լիթոլիզական կտրվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ շերտերը՝ վերնից-ներքև/ համաձայն՝ ՄՆԻՊ IV-5-82/.

Շերտ թիվ 1- Խճավազային գրունտ ավազային և կավավազային լցոնով, մոխրագույն, տեղ-տեղ շագանակագույն, խոնավ, ծակոտկեն և խոռոչավոր, ավազային և խճային կառուցվածքի, մանր, տեղ-տեղ քիչ խոնավացած, խճի և տեղ-տեղ մանրաբեկորների պարունակությամբ: Գրունտներն ըստ շահագործման դժվարության IV կարգ է:

Շերտ թիվ 2-Կավեր շագանակագույն, սևահողագույն, տեղ-տեղ դարչնագույն երանգի, խոնավ, պինդ թանձրության, փոշենման, թեթևավազային, տեղ-տեղ մանրախճի պարունակությամբ 15-20%: Ժամանակակից էլյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության III կարգ է:

Հիդրոերկրաբանական տեսակետից-ուսումնասիրվող տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանների, մասամբ լանջային-գրավիտացիոն պրոցեսների զարգացման վրա ազդող կարևոր գործոններից են հանդիսանում ստորգետնյա ջրերը, որոնց ձևավորումն ու բնույթն ուղղակիորեն կախված է տարածքի ֆիզիկա-աշխարհագրական պայմաններից և երկրաբանա-լիթոլոգիական առանձնահատկություններից: Ելնելով դրանից, հետազոտվող տարածքը գնահատվում է, որպես գրունտային ջրերի սնման, կուտակման և բեռնաթափման շրջան: Ստորերկրյա ջրերի ձևավորումը կատարվում է մթնոլորտային տեղումների ներծծմամբ, իսկ կուտակումը՝ լավատակ հնահուներում: Տվյալ տարածքում գրունտային ջրերը գտնվում են ըստ հորատված հորատանցքների՝ 2.0մ-ից խորը հորզոններում:

Կառույցի հիմքերի համար որպես հիմնատակի գրունտներ կարող են ծառայել.

- շերտ 1(ըստ սեյսմիկ հատկության 2-րդ կարգ է,
- դիմադրությունը $R_0=3.5կգ/սմ^2$)
- շերտ 2(ըստ սեյսմիկ հատկության 3-րդ կարգ է,
- դիմադրությունը $R_0=3.0կգ/սմ^2$):

Սեյսմիկա. Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ-20.04.2020թ.-նորմատիվային փաստթղթի՝ տեղազնվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}= 0.3g$ արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:

Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները՝ կարստը, սողանքը, փլուզում և այլն, որոնք կարող են բացասական ադդեցություն թողնել հիմքերի վրա՝ համաձայն կատարված ուսումնասիրությանը բացակայում են:

Միաժամանակ անհրաժեշտ է կատարել հիմքերի և հիմնատակի գրունտների ջրամեկուսացում, նախատեսել մակերեսային ջրերի ջրհավաք և ջրահեռացման համակարգեր՝ ջրերի մուտքը հիմնատակեր կանխելու նպատակով:

Տարածքը հարակից է հասարակական կառուցապատման տարածքներին:

Տարածքում առկա են ինժեներական ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման համակարգերը: Մուտք տարածք լինելու է 6-րդ փողոցի կողմից:

8.2. Շրջակա միջավայրի բնութագրերը

8.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գեղարքունիքի մարզի Մարտունի խոշորացված համայնքի՝ Երանոս բնակավայրի վարչական տարածքում: Մարզը սահմանակից է Լոռու և տավուշի մարզերին, արևելքից սահմանակից է Ադրբեջանին: Գեղարքունիքի մարզը հիմնականում զբաղեցնում է Սևանա լճի ջրհավաք ավազանը: Մարզի գլխավոր լեռնաշղթաներն են՝ Գեղամա, Արեգունի, Սևանի Արևելյան Սևանի, Վարդենիսի, որտեղ առկա են տասնյակ հրաբխային կոներ՝ հատկապես ուշագրավ են

Ածղահակ և Արմաղան հրաբուխները: Լեռների ձագարածն խառնարաններում գոյացել են գեղեցիկ լճակներ: Արեգունու և Սևանի լեռնաշղթաների Գեղարքունիքի մարզի սահմաններում գտնվող լանջերը զառիթափ են ու կտրտված, իսկ Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների դեպի Սևանա լիճ նայող լանջերը համեմատաբար մեղմաթեք են:

Նկար 2.



Ռելիեֆը անհարթ բլրային է: Մակերևույթի ընդհանուր թեքությունը հարավ-արևելյան ուղղությամբ է: Տարածքը տափաստանային միջին լեռնային (1400-2300 ծ.մ.բ.), իրեն բնորոշ տափաստանային բուսականությամբ՝ հատիկաբուսականության գերակշռությամբ, բլրի արանքներում և քարակույտերի մոտ թփերի և առանձին ծառերի առկայությամբ:

Սևանի ավազանի արևմտյան և հյուսիս-արևմտյան ափամերձ տարածքները բնորոշվում են ռելիեֆի տիպիկ հրաբխային կառուցվածքով: Հրաբխային լավաների հոսքահետքերը, հասնելով մինչև լճի ափամերձ տարածքները՝ առաջացրել են արևմտյան ափի բազմաթիվ ծովախորշեր, հրվանդաններ, երբեմն հզոր քարաբեկորների ձևով՝ ընդհուպ մինչև լիճը: Տարածաշրջանում ռելիեֆը բլրաշատ ափսեաձև իջվածքներով է, թույլ բլրակային, աննշան կոնաձև իջվածքներով: Ռելիեֆի այսպիսի ձևերը օժանդակում են մթնոլորտային տեղումների արագորեն ներծծվելուն և մակերեսային հոսք համարյա չի ձևավորվում: Ջրի հատակից դուրս եկած առափնյա շերտը կազմված է ավազա-կավային և գելենչիկային նստվածքներից:


8.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն.

Մարզի ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները բավականաչափ բարդ են: Գրունտների առավելագույն արագացումները գրանցված են Սևանա լճի հյուսիս-արևելյան և արևելյան ափերում: Տարածաշրջանը բնութագրվում է կտրուկ կտրտված բլրային ռելիեֆով, խորը ձորակներով: Ստորգետնյա ջրերը հիմնականում կապված են վերին կավճի

հասակի կրաքարերի և ուլտրահիմքային ու հիմքային ապարների կոնտակտի հետ, որոնք բնական աղբյուրների տեսքով դուրս են գալիս երկրի մակերես, կրելով սեզոնային բնույթ: Շրջանում մթնոլորտային տեղումներից առաջացած ջրահոսքերը ներծծվելով ապարների շերտերով ու ծակոտիկներով, սեզոնային բնույթի աղբյուրների և ժամանակավոր հոսքերի տեսքով բեռնաթափվում են Սևանա լիճ:

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ-20.04.2020թ. «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր»-ի տեղագնական շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ զրունտների $A_{max}=0.3g$ արագացմամբ:

Գծապատկեր 2



8.2.3. Կլիմա և օդային ավազան.

Տարածաշրջանի կլիման չորային է: Ձմռանը գերիշխում է պարզ արևոտ թույլ սառնամանիքներով եղանակը, ձմռանը չափավոր ցուրտ է: Ամառը տաք է, չոր և անհողմ: Առավելագույն տաք միջին ջերմաստիճանը կազմում է 29°C , ձմռանը՝ -19.3°C : Հարաբերական խոնավությունը կազմում է 68%: Միջին տարեկան մթնոլորտային տեղումները կազմում են 522մմ: Քամու միջին տարեկան արագությունը կազմում է 2.6մ/վ, 25 տարվա կրկնելիությունը՝ 25մ/վ: Արեգանային ճառագայթման հաշվարկային մեծությունը կազմում է 2552 օր:

Գործունեության տարածքի կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024թ. «Շինարարական

կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները Մարտունի համայնքի՝ որպես խոշորացված համայնք և Երանոս բնակավայրի համար:

Օդի ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 1

ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
ՁՄՈՒՆ ՍԿԻՉԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
20. Մարտունի	-5.2	-4.9	-1.3	5.0	9.8	13.4	16.4	16.3	13.2	8.4	2.5	-2.6	5.9	-31.7	33.6

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 2

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																	
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
20. Մարտունի		68	69	68	66	67	70	73	71	66	64	65	66	68	68	61	73	54

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
20.Մարտունի	27	31	47	59	74	69	46	31	32	43	38	25	522	168	354
	51	34	40	46	41	69	65	43	59	49	84	41	84		

Քամի
Աղյուսակ 4

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Մնացորդի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Փերակշտոլ ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Փերակշտոլ ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ	16
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան							
		3	4	5	6	7	8	9	10							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
26.Մարտունի	հունվար	5	1	1	2	49	37	3	2	85	3.7	Հվ	1.7	ՀվԱրմ	4.0	
		1.7	1.7	1.6	2.2	3.6	4.0	2.4	2.2							
	ապրիլ	11	5	3	2	40	30	5	4	78	2.9					
		1.9	2.0	1.7	2.2	3.4	3.8	2.4	2.0							
	հուլիս	30	12	4	1	20	17	5	11	71	1.6					
		2.0	2.1	1.8	1.5	1.7	1.9	1.8	2.0							
	հոկտեմբեր	9	5	2	2	40	35	4	3	83	2.5					
		1.8	1.7	1.6	1.7	2.6	3.1	2.3	1.9							


ԱՐԵՎԱՓԱՅԼ ԵՎ ԱՐԵԳԱԿԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅՅՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղյուսակ 28 Արևափայլի տևողություն (ժ) և առանց արևի օրերի քանակ (օր)

Բնակավայրի անվանումը	Տևողություն	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
21. Մարտունի	ժ	144	150	178	184	237	289	306	299	258	200	161	146	2552
	օր	4	3	3	3	2	0.3	0.3	0.3	1	1	3	4	25

Համաձայն նորմատիվային փաստաթղթի՝ Մարտունի քաղաքը գտնվում է ցուրտ կլիմայական գոտում՝ ծովի մակարդակից 1943մ բարձրության վրա, որին բնորոշ է զով ամառը, ձմռանը շատ ցուրտ է, քամոտ, խոնավ: Ամառը առավելագույն ջերմաստիճանը հասնում է 33.6°C, բացարձակ նվազագույնը՝ -31.7°C, հարաբերական խոնավությունը 68%, տարեկան տեղումները կազմում են 522մմ, քամու միջին արագությունը՝ 1.6- 3.7 մ/վ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Օդային ավազան. Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ հանրապետության տարածքի 45 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում:

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ: Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:

Մարզի օդային ավազանը գտնվում է բավականին բարվոք վիճակում: Մարզում չկան արտադրական ձեռնարկություններ, հիմնականում ավտոտրանսպորտի արտանետումներն են: Տարածքի հաշվարկով այս օդային ավազան արտանետումների մակարդակը քիչ է հանրապետության միջինից շուրջ 6.3 անգամ:

Օդային ավազանում հայտնաբերված փոշու քանակությամբ մարզը գտնվում է բարվոք վիճակում, այս ցուցանիշը միջին հանրապետական մեկ շնչի հաշվով ցուցանիշից փոքր է շուրջ 3 անգամ:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել

տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի Գլխավոր (armmonitoring.am) էլեկտրոնային կայք էջի՝ 2024թ. 1-ին եռամսյակի հրապարակված տեղեկագրում շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների, Գեղարքունիքի մարզի և քաղաքների օդային ավազանի որակի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

Նախատեսվող գործունեության տարածքում օդի որակական ցուցանիշների, մթնոլորտն աղտոտող նյութերի և աղտոտվածության մակարդակի էլակետային տվյալների վերաբերյալ՝ տեղեկատվությունը ներկայացվել է «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից՝ հրապարակված «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում (<http://meteomonitoring.am/page/1591>): Ներկայացվում է Երանոս բնակավայրի օդի որակական ցուցանիշներն ըստ բնակչության թվաքանակի, որպես մինչև 10000 բնակիչ ունեցող բնակավայրեր(Երանոս բնակավայրը՝ 5401 մարդ) .

- ✓ Փոշի՝ 0,071 մգ/մ³,
- ✓ ծծմբի երկօքսիդ(SO₂)՝ 0,006 մգ/մ³,
- ✓ ազոտի երկօքսիդ (NO₂)՝ 0.023 մգ/մ³,
- ✓ ածխածնի օքսիդ (CO)՝ 0.8 մգ/մ³:

8.2.4. Հողային ռեսուրսներ.

Տարածաշրջանում տարածված են լեռնատափաստանային և մարգագետնային սևահողերը, գորշ և դաչնագույն անտառային և լեռնաշագանակագույն, լեռնամարգագետնատափաստանային, դարչնագույն անտառային հողերը: Կախված ռելիեֆի պայմաններից և էրոզիայի ենթարկվածության աստիճանից, ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում զգալի հարթ տարածություններ կան, առկա են շատ որակյալ հողեր և նպատակահարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկ, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է՝ շուրջ 10000 հեկտար: Այդ հարթ տարածությունները ծովի մակերևույթից ունեն 1900-2200մ բարձրություն: Տարածքը ներկայացած է միջին բարձրությամբ լեռնաշղթաներով, ուղիղ և ալիքաձև թեքություններով և հարթություններով: Տարածքում գերիշխում են լեռնային սևահողերը, անտառային դարչնագույն հողերը: Մարզի հարավային և արևմտյան հատվածների հողային ծածկույթը հիմնականում ներկայացված է սևահողերով և գետահովտադարավանդային հողերով, իսկ հյուսիսային և հյուսիս-արևելյան հատվածները՝ մարգագետնատափաստանային, անտառային դարչնագույն և անտառային գորշ հողերով:

Տարածաշրջանում լճային նստվածքների վրա ձևավորվել են գետահովտային, մարգագետնացած կոպճային և թույլ զարգացած ավազակոպճային հողագրունտների տիպերը: Ավազանի բնական ցամաքային էկոհամակարգերն են մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային համակեցությունները, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված համալիրները:

Մարզի խոշոր հիմնախնդիրներն են՝ հողերի դեգրադացումը, էրոզիան, ավիամերձ գոտու անտառների ջրածածկումը: Մարզի հողային ծածկույթի էրոզիայի առավելագույն ցուցանիշները դիտարկվում են արևելյան և հյուսիսային հատվածներում:

Նկար 5



Համաձայն Գեոարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի՝ Սևանի տարածաշրջանում մեծ զանգվածներով հանդիպում են տիպիկ միջին հումուսային ալկալացված սևահողերը՝ լեռնային սևահողերի ենթատիպով: Հումուսի պարունակությունը կազմում է 8-12%: Լեռնային սևահողերն ունեն հումուսի մեծ պաշար՝ 0-60սմ խորության վրա հումուսի պաշարները կազմում են 360տ/հա:

Ռեակցիան վերին հորիզոններում թույլ հիմնային է, ներքևում՝ չեզոք:

Լեռնային սևահողերը օգտագործվում են մեծ մասամբ որպես խոտհարք և արոտավայր, իսկ տեղ-տեղ նաև որոշ գյուղատնտեսական կուլտուրաների մշակման համար (զարի, երկարամյա խոտեր):

Հանքաբանական կազմում գերակշռում են թեթև և միջին շրջանի միներալներ:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գիտատնտեսական իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ

Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

«Հիդրոոդերոնութաբանության և մոնիթորինգի կենտրոն»ՊՈԱԿ-ի էլեկտրոնային կայքում, 2023թ. 3-րդ եռամսյակի տեղեկագրերում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են միայն Գեղարքունիքի մարզի Զիլի հանքային դաշտում, իսկ այլ բնակավայրերի հողերում մետաղների պարունակության և աղտոտվածության ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

«Հիդրոոդերոնութաբանության և մոնիթորինգի կենտրոն»ՊՈԱԿ-ի էլեկտրոնային կայքում 2024թ. եռամսյակային տեղեկագրերում, հողերում մետաղների պարունակության և աղտոտվածության ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

8.2.5.Ջրային ռեսուրսներ

Սևանի ավազանի հիդրոերկրաբանական պայմանները բնորոշվում են երկրաբանա-կառուցվածքային, գեոմորֆոլոգիական և ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկություններով: Սևանի ջրավազանային տարածքը ներառում է Ձկնագետ, Մասրիկ, Սոթք գետերի գետավազանները, Վարդենիսի ու Գեղամա լեռներից սկսվող գետերը: Ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային և արտադրական կեղտաջրերը: Սևանի ջրավազանային տարածքում ստորերկրյա ջրերի քանակի և որակի նշանակալի փոփոխություններն աննշան են, պայմանավորված բնական պայմաններով՝ ամռան ամիսներին ռոտզման նպատակով հորերի ջրածախսի ավելացմամբ Տարածաշրջանի ամենամեծ ջրային ռեսուրսը Սևանա լիճն է:

Սևանա լիճ. Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան, հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան:

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 177-Ն որոշմամբ հաստատված «ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ»՝ Լճի երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ², որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Ափի շրջագիծը մոտ 230 կմ է, միջին խորությունը 26.8 մ է, ամենախորը վայրը՝ 83,3 մ (Փոքր Սևան): Ջրի ծավալը 32,92 մլրդ մ³ է: Լիճը գտնվում է Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա: Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.7 կմ³:

Համաձայն 2014թ. «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվել և իրականացվում են Սևանա լճի և ջրհավաք ավազանի էկոհամակարգերի պահպանության, էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և կենսաբազմազանության բնականոն զարգացման ու բնական պաշարների կայուն օգտագործման միջոցառումներ: Սևանա լճի ավազանի համայնքների զգալի մասում ռոռզման նպատակով հիմնականում օգագործվում են Սևանա լիճ թափվող գետերի ջրերը, որոնց մեծ մասը անկանոն և չվերահսկվող ռոռզման հետևանքով ամառային ամիսներին ցամաքում են՝ զգալի վնաս հասցնելով գետերում ձվադրող ձկնատեսակներին՝ Սևանի կողակին, Ամառային իշխանին, Գեղարքունիքին և Սևանի բեղլուին, որոնք կորցնում են բազմացման համար անհրաժեշտ միջավայրը և պայմանները:

Սևանա լճի համար գերխնդիր է նաև հարակից բնակավայրերից, արտադրական օբյեկտներից և լճի շուրջը կառուցապատված հանգստյան տներից լիճ թափվող կեղտաջրերի խնդիրը՝ մարզի արտանետվող կեղտաջրերի շուրջ 80%-ը չեն մաքրվում:

Մաքման կայանների նախատեսումը և ավիամերձ ջրածածկ հատվածների մաքրումը Սևանա լճի համար խիստ անհրաժեշտություն է:

Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով լճի ավիամերձ տարածքները ջրածածկվում են, ինչի հետևանքով ջրի տակ են մնում անտառածածկ հատվածներ՝ հսկայական ծառեր, թփեր, ծառերի արմատներ, շենքեր, շինություններ, ճանապարհներ և տարբեր ենթակառուցվածքներ: Պետբյուջեի միջոցներով ջրածածկ անտառաթփային տարածքները շարունակաբար մաքրվում են:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման 12.1 հավելվածի համաձայն՝ լճի մակերևույթից և տարբեր խորություններից: Մոնիթորինգն իրականացվում է տարին 2 անգամ՝ 18 դիտակետերում՝ հիմնականում անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար: Համաձայն կազմակերպության կողմից 2024թ. 1-ին եռամսյակի տեղեկագրի՝ Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում,:


2024 թվականի հունվարի 1-ին Սևանա լճի մակարդակը կազմել է 1900.17 մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 11 սմ-ով:

Տարածաշրջանի գլխավոր ջրային արտերիաներից են Սևանա լիճ թափվող Մարտունի և Արգիճի գետերը: Մարտունի գետը սկիզբ է առնում Վարդենիսի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 3300 մ բարձրությունից ունի 27,6 կմ երկարություն, ջրհավաք ավազանը կամում է 35 101կմ²: Մնումը հիմնականում ձնաանձրևային (58%) է, գետի ջրերն օգտագործվում են ռոռզման նպատակով:

Արգիճի գետը սկիզբ է առնում Գեղամա լեռնավահանի Գնդասար լեռնազանգվածի հյուսիսային լանջից՝ 2600մ բարձրությունից, ունի 51կմ երկարությունը է, ջրահավաք

ավազանը՝ 384 կմ²: Մնումը հիմնականում հալոցքային է (55%) և ստորերկրյա (36%): Ջրերն օգտագործվում են ոռոգման և էներգետիկ նպատակներով:

Սկար 6



Համաձայն Գլխավոր (www.armmonitoring.am) էլեկտրոնային էջի՝ Մարտունի գետի ջրի որակը Մարտունի գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Արգիճի գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Սևան լճի մակերևութային շերտում ջրի որակը գնահատվել է հիմնականում «անբավարար» (4-րդ դաս):


8.2.6. Կենսաբազմազանություն

Տարածաշրջանը լեռնային է և բնորոշվում է լանդշաֆտների ուղղաձիգ գոտիականությամբ՝ ցածր և միջին լեռնաանտառային, մարգագետնատափաստանային, մերձալպյան, ալպյան: Բնական անտառները՝ գիհի և կաղնի ծառատեսակներով ոչ մեծ

կղզյակներով տեղակայված են Արեգունյաց լեռնաշղթայի ուղղաձիգ լանջերի վրա, իսկ առանձին ծառեր և ծառերի փոքր խմբեր հանդիպում են նաև լճափի այլ հատվածներում: Հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքերը, նաև հրդեհները բացասաբար են ազդում հանրապետության բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա:

Սևանա լճի և տարածքի կենսաբազմազանության պահպանման նպատակով ստեղծվել է «Սևան»ԱՊ-ը:

Նկար 7



Բուսական աշխարհ: Տափաստանային գոտին Հայաստանի տարածքի ամենաընդարձակ գոտին է, որը սկսվում է 1500-1600 մ-ից, երկրի հյուսիսային հատվածում հասնում է մինչև 2000 մ բարձրության, իսկ հարավային հատվածում՝ 2400-2500 մ: Գոտին տափաստանային է և գորշ կարբոնատային, անտառային: Աչքի են ընկնում բուսական համակեցությունների բազմազանությամբ: Ծայրահեղ չորասեր, գուղձավոր, պնդաձիմ հացազգի խոտաբույսերի, փշաբարձիկավոր տարախոտերի առկայությունը բուսականության բնորոշ առանձնահատկություններից է:

Մարզի հիմնական անտառ կազմող ծառատեսակները հանդիսանում են սոճին, եղնին, բարդին, ուռենին, թեղին, հացենին, ակացիան, փշատենին և այլ փշատերև ու սաղարթավոր

ծառատեսակներ: Սևանա լճի ջրից ազատված հողագրունտները ծածկված են արհեստական տնկարկներով (սոճի, չիչխան, բարդի և այլ):

Ցածրադիր վայրերում աչքի են ընկնում անապատները ու կիսաանապատները, որոնք առաջացել են լճից ազատված ավազուտների վրա և ունեն երկրորդային ծագում: Այդ տեսակներից որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փովոդ թփուտները՝ ցածրաձ գիհուտներ (*Juniperus depressa*) և այլն: Թփատեսակներից ամենամեծ մակերեսները զբաղեցնում է չիչխանը:



Նկար 8. Չիչխան

Տարածված են նաև արոսենու (արոսենի Կուզնեցովի (*Sqrbus kuznetsqvii*), արոսենի Հայաստանի (*S.hajastana*), արոսենի հունական (*S.graeca*)), մասրենու (*Rqsa spinqsissima*, *R.canina*), ասպիրակի (*Spiraea crenata*), ալոճենու (*Crataegus qorientalis*), ուռենու (*Salix caprea*) և այլ համակեցություններ:

Բնական բուսածածկույթին փոխարինելու են գալիս մշակաբույսերը՝ ցորեն, եգիպտացորեն, արևածաղիկ, պտղատու այգիները, իսկ ողողատներում՝ բանջարեղենի մշակությունը: (UNDP): Տարածաշրջանում կան անոթավոր բույսերի 1587 տեսակ, 32 ծառատեսակ, 102 թփերի տեսակ, 1146 բազմամյա խոտաբույս և 307 միամյա ու երկամյա բուսատեսակներ: Շուրջ 60 բուսատեսակներ համարվում են դեղաբույսեր և 100-ը՝ ուտելի են: Կան նաև 267 տեսակի սնկեր, որից 100 տեսակը ուտելի են և 24 տեսակը՝ թունավոր: Տեղանքում աճում են հացազգիներին պատկանող շատ բույսեր՝ շյուղախոտի (*Festuca sp.*), որումի (*Lolium sp.*) 95.1 և դաշտավլուկների (*Poa sp.*) տարբեր տեսակներ:

Ռելիեֆային առանձնահատկությունների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ՝ հարուստ և բազմազան: Սևանի ջրհավաք ավազանի տափաստանային գոտին՝ 1906-2400մ ծովի մակերևույթից բարձր է, հիմնականում ներկայացված է չոր և տիպիկ տափաստաններին բնորոշ խոտաբույսերով՝ շյուղախոտ, փետրախոտ և այլն: Այստեղ աճում են նաև գիհու, մասրենու, արոսենու, կծուխորի, այծատերևուկի և այլ թփուտներ: Բավական շատ են գազերը, ոզնաթփերը, որոնց թվում կան մի շարք հազվագյուտ և անհետացող տեսակներ:

Սևան ազգային պարկի և պահպանական գոտու տարածքում գրանցված են մոտ 1.600 տեսակ բարձրակարգ բույսեր (Հայաստանում գրանցված բարձրակարգ բույսերի կեսից ավելի)

այդ թվում՝ 55 հազվագյուտ ու անհետացող, 23 էնդեմիկ, որոնք աճում են միայն Սևանի ավազանում: Դրանք են Լրձուն Սևանի, Ոզնաթուփ Գաբրիելյանի և այլն: Բուսականությունը հիմնականում տափաստանային է՝ հացազգային, տարախոտա-հացազգային /*Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albobii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Stipa capillata* L., *S. Lessingiana* Trin. Et Rupr., *S. Tirsa* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., տեսակներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*/:

Կարմիր գրքում գրանցված են տարածաշրջանին բնորոշ՝ Խոզանափուշ Ֆյոդորովի-*Cousinia fedorovii* Takht, Լրջուն Սևանի-*Isatis sevangensis* N. Busch, Թրաշուշան հայաստանյան-*Gladiolus hajastanicus* Gabrielian, Հիրիկ Նրբագեղ - *Iris elegantissima* Sosn, Վիշապագլուխ ավստրիական - *Dracocephalum austriacum* L., Գառնառվույտ հայկական - *Oxytropis armeniaca* Sosn. ex Mulk.:



Նկար 9. Վիշապագլուխ ավստրիական



Նկար 10. Գառնառվույտ հայկական

Ազգային պարկի և պահպանական գոտու տարածքի շուրջ 60 բուսատեսակներ օգտագործվում են որպես դեղաբույսեր, իսկ շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի:

Կենդանական աշխարհ: Կենդանական աշխարհը ներկայացված է ողնաշարավոր կենդանիների 330 տեսակներով՝ 44 տեսակ կաթնասուններ՝ գիշատիչներ, միջատակերներ, կրծողներ, չղջիկներ (գայլ, աղվես, նապաստակ, կզաքիս, փորսուղ, աքիս, լուսա, ոչ հաճախ նաև արջ և այլն), թռչունների՝ 267 տեսակ, 4 տեսակ երկկենցաղներ, 16 տեսակ սողուններ և 9 տեսակ ձկներ:

Կաթնասունները պատկանում են հետևյալ կարգերին.

- ❖ Միջատակերներ (*Insectivora*),
- ❖ Կրծողներ (*Rodentia*),
- ❖ Նապաստակներ (*Logomorpha*),
- ❖ Չղջիկներ (*Chiroptera*),
- ❖ Գիշատիչներ (*Carnivora*),

❖ Սմբակավոր/կնդակավոր կաթնասուններ (Artiodactyla):

Համաձայն «Գեղարքունիք» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի՝ մարզի տարածքում հաշվարկվում են 43 տեսակի փափկամարմիններ, 639 տեսակի հողվածոտանիներ, որոնք պատկանում են միջատներին: Դրանցից 6-ը Հայաստանի էնդեմներ են: Կապտաթիթեռը (*Maculinea nausithous* Bergs), որն հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում:

Սևանա լճի ձկները ներկայացված են սաղմոնազգի-Salmonidae, սիգազգի Coregonidae և ծածանազգի-Cyprinidae ընտանիքներով: Սաղմոնազգիներին են պատկանում Սևանի իշխանը (*Sevan Trout-Salmo ischchan* Kessler 1877) իր 4 էկոլոգիական ենթատեսակներով՝ Ամառային բախտակ (*S. ischchan aestivalis*), Ձմեռային բախտակ (*S. ischchan ischchan*), Գեղարքունի (*S. ischchan gegarkuni*), Բոջակ (*S. ischchan danilewskii*): Սիգազգիների ընտանիքի ներկայացուցիչը կլիմայավարժեցված սիգն է (*Whitefish-Coregonus lavaretus*): Ծածանազգի ձկնատեսակներին են պատկանում լճի երկու էնդեմիկները՝ Սևանի կողակը (*Khrami carp Varicorhinus capoeta sevangi*) և Սևանի բեղլուն (*Sevan 17 barble-Barbus goktschaicus*): 1980-ական թվականների սկզբից լճում սկսել է հանդիպել նաև արծաթափայլ լճածածանը (*Crucian carp-Carassius auratus gibelio*), որը պատահաբար լիճ է ներթափանցել արարատյան դաշտի ջրային համակարգերից:

Տարածաշրջանում հանդիպում են նաև 4 տեսակի երկկենցաղներ Ցատկողներ (*Salientia*) կարգին պատկանող՝ Լճագորտ (*Rana ridibunda*), Փոքրասիական գորտ (*Rana macrocnemis*), Կանաչ դողոշ (*Bufo viridis*), Շելկովնիկովի ծառագորտ (*H.a.shelkovnikovi*):

Սողուններից հանդիպում են՝ Սպիտակափոր ժայռային, Նաիրյան ժայռային, Ռոստոմբեկովի ժայռային, Հայկական ժայռային, Վալենտինի ժայռային մողեսները, իսկ օձերից՝ սովորականը, ջրային լորտուները, պղնձօձը, լեռնատափաստանային իժը: Երկկենցաղներից առկա են կանաչ դողոշը, լճագորտը, փոքրասիական գորտը և շելկովնիկի ծառագորտը[11]:

Ջրային կամ ջրաճահճային կենդանիների համար որպես ապրելավայր ծառայում են Սևանա լճի ջրերը, ափամերձ գոտու ճահճուտներն ու լիճ թափվող գետերի գետաբերանները: Վերջին 4 տասնամյակի ընթացքում Սևանա լճի մակարդակի իջեցումը, ինչպես նաև ճահճուտների արհեստական չորացումը, նախկին ժայռոտ ափերի վերացումը խիստ բացասաբար են անդրադարձել ավազանի կենդանական աշխարհի վրա, որը հատկապես ցայտուն կերպով արտահայտված է թռչունների վրա:

Սևանի ավազանում հանդիպում էին 267 տեսակի թռչուններ՝ ձկնկուլ (*Pelecaniformes*) - 4 տեսակ, արագիլ, տառեղ, ջրցուլ (*Ciconiiformes*) - 11 տեսակ, ֆլամինգո (*Phoenicopteriformes*) - 1 տեսակ, հոպոպ, սագեր, բադեր և այլն: Թռչուններից 48 տեսակը բնադրող են: Այսօր դրանցից շատերը՝ մոխրագույն սագը, տուրպան, կարմրակտուց և կարմրագլուխ բադերը, սպիտակագլուխ բադը (սավկան), չեն բնադրում լճի տարածքում: Էնդեմ հանդիսացող Սևանի ծովորորի համար բնական միջավայրը դարձել է էկոլոգիապես անկայուն: Պարկում մեծ պոպուլյացիաներով հանդիպում են՝ մեծ քնամուկը (*Glis glis*), պարսկական սկյուռը (*Sciurus persicus*), անտառային մուկը (*Apodemus sylvaticus*), այծյամը (*Capreolus capreolus*), լայնականոց ոզնին (*Tadarida teniotis*) և այլն:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված են՝ Կաթնասունների 6 տեսակ, (գործ արջը, ջրասամույրը, անտառային կատուն, բեզոարյան այծ-*Capra aegagrus* Erxleben և այլն), սողուններից 2 տեսակ(խայտաբղետ՝ Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ-*Eremias arguta transcaucasica* Darevsky, 1953) և փոքրասիական մողեսները- *Darevskia rostombekovi* Darevsky 1957), 39 թռչնատեսակներ (Հայկական որոր-*Larus armenicus*), վարդագույն հավալուսն - *Pelecanus onocrotalus* Linnaeus, ձկնկուլը և այլն), սագանմաններից՝ սպիտակագլուխ բաղ կամ սավկա - *Oxyura leucocephala* Scopoli, ձկներից՝ Սևանի իշխանը իր տարատեսակներով, Սևանի բեղուն (*Barbus goetschaicus* Kessler) և Սևանի կողակը (*Varicorhinus capoeta sevangi*, Filippi) հողվածոտանիներից՝ Արիոն կապտաթիթեռը - *Maculinea arion zara* Jachontov, Մթնշաղային կապտաթիթեռ - *Maculinea nausithous*, Անտեսված կապտաթիթեռ - *Agrodiaetus neglectus* Dantchenko, Նինայի կապտաթիթեռ - *Agrodiaetus niniae* Forster, Թուրքական կապտաթիթեռ - *Agrodiaetus turcicus* Koçak, գրանցված են միջազգային միության Կարմիր գրքում:



Նկար 11. Հայկական որոր



Նկար 12. Նինայի կապտաթիթեռ

Նախատեսվող գործունեության տարածքում կարմիր գրքում գրանցված բուսատեսակները, կենդանատեսակները և կենդանիների բնադրավայրերը բացակայում են:

Հատուկ պահպանվող տարածքներ

Մարզի բնության հատուկ պահպանվող տարածք է «Սևան» ազգային պարկը՝ 150,1 հազ. հա մակերեսով: Այն գտնվում է շրջակա միջավայրի նախարարության կառավարման ներքո՝ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործառույթների միջոցով: Այն բաժանվում է չորս՝ արգելոցային, արգելավայրային, ռեկրացիոն և տնտեսական գոտիների: Պարկի տարածքում են գտնվում «Նորաշենի», «Լիճք-Արգիշի», «Գիլլի» և «Արտանիշի» արգելոցները՝ 7464 հա ընդհանուր մակերեսով, որից ցամաքայինը կազմում է 4289 հա, ջրայինը՝ 3175 հա: Այստեղ է գտնվում նաև երկու՝ «Գավառագետի» և «Գիհի-կաղնուտային ռելիկտային» արգելավայրերն՝ ընդհանուր 2652 հա մակերեսով:

8.2.7. Պատմության և մշակութային հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման՝ Երանոս գյուղի վարչական տարածքի համար սահմանվում է հուշարձանների հետևյալ ցանկը.

4.33 ԵՐԱՆՈՍ գյուղ

Աղյուսակ 6

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ	Ք.ա. 3 հազ.	գյուղից 1.5 կմ հս-ամ	<	ամրոց Նեղ բողազ (1)
2			ԱՄՐՈՑ «ՇԵՆ»	Ք.ա. 2-1 հազ.	գյուղի հս մասում, Երևան-Մարտունի ճանապարհի ձախ կողմում	<	ամրոց՝ Դվոռ (2)
3			ԳԵՐԵՁՄԱՆՈՑ	9-20 դդ.	գյուղի ամ մասում, գյուղամիջյան ճանապարհի ձախ կողմում	S	3: Ենթակայությանը ներկայացված է 21 հուշարձան (3.1-3.21)
4			ԳԵՐԵՁՄԱՆՈՑ	12-18 դդ.	գյուղի մեջ, Անուշավան ժամհարյանի տան մոտ, սար տանող ճանապարհից աջ		5
5			ԳԵՐԵՁՄԱՆՈՑ «ԴԱՐԻ ԳԼՈՒՄ»	10-17 դդ.	գյուղից 0.7 կմ հվ	S	4: Ենթակայությանը ներկայացված է 3 հուշարձան (4.1-4.3)
	5.1		Մատուռ «Խաչեր»	12-13 դդ.		S	4.4: Ենթակայությանը ներկայացված է 8 հուշարձան (4.4.1-4.4.8)
6			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	10-17 դդ.	գյուղից 2.5 կմ հս	S	գյուղատեղի Կուռու խարաբա (ավերակներ) (6)
	6.1		Գերեզմանոց	9-17 դդ.	Եկեղեցուց հվ	S	6.2: Ենթակայությանը ներկայացված է 8 հուշարձան (6.2.1-6.2.8)
	6.2		Եկեղեցի	10-11 դդ.		S	6.1

7		ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2.5 կմ հս, Կուռու խարաբա գյուղատեղիից ան	<	դամբարանադաշտ Կուռու խարաբա (ավերակներ) (7)
8		ԽԱՉՔԱՐ	9-10 դդ.	գյուղամիջյան Թուխ Մանուկ մատուռում	<	9
9		ԽԱՉՔԱՐ	10-11 դդ.	ագուցված է գյուղամիջյան Թուխ Մանուկ մատուռի պատին, ներքուստ	<	10
10		ԽԱՉՔԱՐ	1216 թ.	ագուցված է գյուղամիջյան Թուխ Մանուկ մատուռի ան պատին, ներքուստ	<	11
11		ԽԱՉՔԱՐ	13 դ.	գյուղի մեջ, «Հագարանփրկիչ» սրբատեղիում	<	12
12		ԽԱՉՔԱՐ	14-15 դդ.	ագուցված է գյուղամիջյան «Հագարանփրկիչ» սրբատեղիի պատին, ներքուստ	<	13
13		ԿՈԹՈՂ	5-6 դդ.	գյուղից 3 կմ ամ, «Խոնարհված սուրբ» նորակառույց մատուռում	<	14
14		ԿՈԹՈՂ	5-6 դդ.	գյուղից 2 կմ ամ, «Սարի սուրբ» նորակառույց մատուռում	<	15
15		ՄԱՏՈՒՌ ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ (ՍԱՐԻ ՍՈՒՐԲ)	10-11 դդ.	գյուղից 1.5 կմ հվ	S	16
16		ՄԱՏՈՒՌ «ՇՈՂԱՆ ԱՂԲՅՈՒՐ»	9-12 դդ.	գյուղից 6-7 կմ հվ-ամ, համանուն գյուղատեղում	S	17: Ենթակայությանը ներկայացված է 5 հուշարձան (17.1-17.5)

Բնության հուշարձաններ.

Գեղարքունիքի մարզում և Սևանի ավազանը հարուստ են բնական հուշարձաններով: ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ մարզում կան 15 բնության հուշարձաններ, որից 7-ը՝ երկրաբանական, 6-ը՝ ջրաերկրաբանական, 1-ը ջրագրական և 1-ը՝ կենսաբանական: Բնական հուշարձանների մի մասն ունի հատուկ պահպանվող տարածքների կարգավիճակ:

Մարզի տարածքում պահպանվել են բազմաթիվ միջնադարյան ճարտարապետական հուշարձաններ, առանձնապես ուշագրավ բնական հուշարձաններ, խառնարանային լճեր, խարամային կոներ, ընդարձակ քարային ծովեր:

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ Գեղարքունիքի մարզում առկա են հետևյալ բնության հուշարձանները.

Աղյուսակ 7.

	Երկրաբանական հուշարձաններ	
1	«Սևկատար» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20 կմ արլ
2	«Աժդահակ» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ
3	Սևանուն» ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արլ ափին, Երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա
4	«Քարե ծով» քարացրոններ (շինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
5	«Սևանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ
6	«Արմաղան» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Մաղինա գյուղից 3.5 կմ արմ 27. «Հայրավանք» բրածո ֆաունա Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-ա
7	Հայրավանք» բրածո ֆաունա	Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-ար
	Ջրաերկրաբանական հուշարձաններ	
1	«Սարանց» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
2	«Խաչերի» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ ծայրամասում
3	«Սևանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա
4	«Սևանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա
5	«Սևանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
6	«Վանքի աղբյուր» աղբյուրների խումբ	Գեղարքունիքի մարզ, Սարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 մ բարձրության վրա
	Ջրագրական հուշարձաններ	
1	«Ակնա» լիճ	Գեղարքունիքի մարզ, Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ, Ակնասար լեռան լանջին
	Կենսաբանական հուշարձաններ	
1	«Ենթալպյան մարգագետին»	Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղի մոտ

Գեղարքունիքի մարզ, Սևանի լեռնաշղթայի լանջերի (Շորժա գյուղի շրջակայքում) առկա են նաև «Օֆիոլիտային ապարների» մերկացումները:

2021թվականի հոկտեմբերի 21-ի կառավարության N1718-Ն որոշմամբ հաստատված է նաև «Թառ(Կարմիր Կատար)հրաբուխ երկրաբանական հուշարձանը՝ մոտ 3440մ ծ.մ, որը գտնվում է Գավառ համայնքում, աժդահակ հրաբխից արևմուտք:

Պատմության և մշակութային, բնության հուշարձանները տարածքում բացակայում են:

8.2.8. Սոցիալ-տնտեսական

Մարզի տարածքը կազմում է 5351քառ.կմ, ներառում է 5 քաղաքներ և 93 գյուղական բնակավայրեր: Մարզի տարածքում է գտնվում Սևանա լիճը և «Սևան»ԱՊ-ը: Մարզկենտրոնը Գավառ քաղաքն է: 2024թ. տարեսկզբի դրությամբ մարզի բնակչությունը կազմում է 213,2հազ. մարդ:

Ներկայացվում է մարզի ներկա վիճակն ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի /armstat.am/

կայք էջի:
Աղյուսակ 8

Տարածքը Territory	5 351 քառ. կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, %	18.0
Համայնքներ, 2024թ. տարեսկզբի դրությամբ Communities, as of the beginning of 2024	5
Քաղաքներ Towns	5
Գյուղեր Villages	93
Բնակչության թվաքանակը 2024թ. տարեսկզբի դրությամբ Population number as of the beginning of the year, 2024	213.2 հազ. մարդ/ ths. person
այդ թվում՝ including:	
քաղաքային urban	67.6 հազ. մարդ/ ths. person
գյուղական rural	145.6 հազ. մարդ/ ths. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2023թ., % Share of marz population in the total population of the Republic of Armenia 2023, %	7.1
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2023թ., % Share of urban population size 2023, %	31.7
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	345 083.3 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including: arable land	81 413.2 հա/ ha

2023թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 2.0 %,
- գյուղատնտեսություն 11.6 %,
- շինարարություն 4.6 %
- մանրածախ առևտուր 2.3 %
- ծառայություններ 0.8 %:

Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Կարևոր նշանակություն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որի մեջ մեծ տեսակարար կշիռ ունի սննդամթերքի արտադրությունը: Մարզում են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը:

Մարզի տնտեսության առաջատար ուղղությունը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 345 083.3հա, որից վարելահողերը՝ 81 413.2հա: Բեռնատուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Մարզի տարածքով անցնում է Երևան-Սևան-Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին:

Մարտունի համայնք. Համաձայն Մարտունու խոշորացված համայնքի 2022-2026թ.հնգամյա զարգացման ծրագրի՝ Մարտունին գտնվում է Սևանի ավազանի հարավային մասում Գեղամա և Վարդենիսի լեռնավահանների միջև՝ ծովի մակադակից 1920- 2020մ բարձրությունների վրա: Տարածքի կլիման բարեխառն լեռնային է՝ կարճատև զով ամառներով և ցուրտ ձմեռներով: Հուլիսի միջին ջերմաստիճանը կազմում է +14° C, +17° C, իսկ հունվարինը՝ -6° C ից-10° C է: Օդի առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է +31°, իսկ նվազագույնը՝ -25°: Ձմռանը գոյանում է կայուն ձնածածկույթ: Մթնոլորտային տեղումները տարեկան քանակը կազմում է 400մմ է, որը ըստ բարձրության ավելանում է մինչև 800մմ: Տեղումների առավելագույնը թափվում է գարնան վերջին և ամռան սկզբին: Տարածքին բնորոշ են մերձափնյա բրիզները:

Տարածքի ջրագրական ցանցը պատկանում է Սևանի ավազանին:

Մարտունի քաղաքը նախկինում Գեղարքունիք գավառի Կզնուտ գյուղն է, որը 1832 թվականին վերանվանվեց Ներքին Ղարանյուղ, իսկ Խորհրդային Հայաստանի ժամանակաշրջանում վերանվանվել է Մարտունի՝ ի պատիվ Ալեքսանդր Մյասնիկյանի: 1962 թվականին Մարտունին դարձել է քաղաքատիպ ավան, իսկ 1993 թվականից հետո հանրապետական նշանակության քաղաք:

2021թ./24.09/ ՀՀ վարչատարածքային բաժանման մասին օրենքի 328Ն որոշմամբ, ՏԻՄ ընտրությունների միջոցով 05/12/2021թ ձևավորվել է Մարտունի խոշորացված համայնքը՝ 17 բնակավայրերով: Բնակչությունը կազմում է 2024թ. տարեսկզբի դրությամբ կազմում է 11900 մարդ: Մարտունի համայնքում առկա է պետական պահպանության ցանկում ընդգրկված 303 միավոր պատմամշակութային հուշարձան, որոնցից յուրաքանչյուրում ընդգրկված են տասնյակ ու հարյուրավոր այլ կոթողներ, վավերագրություններ, հնավայրեր, հոգևոր այլ արժեքներ: Մարտունու տնտեսությունն ունի ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ արդյունաբերական ուղղվածություն: Այժմ համայնքում առկա են գործող միջին ձեռնարկություններ՝ հացաբուլկեղենի, փայտամշակման, կահույքի արտադրության, բետոնի, եվրոպատուհանների արտադրություն, ալրադաց, քարի արտադրամաս, զարգացած է ձկնաբուծությունը , արևային էներգիայի, կաթնամթերքի, ապահաճոնների արտադրությունները:

Մարտունու տարածաշրջանը եղել է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական զարգացած շրջաններից մեկը: Նպաստավոր պայմաններ է ունեցել հացահատիկի, կարտոֆիլի, կաղամբի, այգեգործության, այլ կուլտուրաների, ինչպես նաև անասնապահության զարգացման համար: գտնվելով Հայաստանի երկու տուրիստական դարպասների՝ Գորիսը և Դիլիջանը միացնող ամենակարճ ճանապարհների վրա, Մարտունի համայնքը տուրիզմի զարգացման տեսանկյունից ունի մեծ պոտենցիալ, որը վերջին տարիներին սկսել է ակտիվանալ:

Մարտունի համայնքում գործում է Մարտունու քաղաքի կենտրոնական գրադարան ՀՈԱԿ-ը, մարզադպրոց, երաժշտական դպրոց, արվեստի դպրոց, ծննդատուն, ատամնաբուժարան, դեղատներ: Համայնքի բնակավայրերում հիմնականում առկա են փոքրիկ գրադարաններ՝ մշակույթի շենքերում: Մարտունի համայնքի համար

գերխնդիրներից է Սևանա լճի ավիամերձ հատվածի ճահճացումը, ճանապարհների, բակերի, մայթերի, խաղահրապարակների, բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների, մուտքերի, կոյուղու, խմելու և ոռոգման ջրագծերի վատ վիճակը, գյուղատնտեսական մթերքների իրացումը: Համայնքում բացակայում են թատրոնն ու կինոն, կենտրոնական գրադարանի շենքը գտնվում է անմխիթար վիճակում:

Երանոս գյուղական բնակավայր. համաձայն Երանոս համայնքի զարգացման հնգամյա ծրագրի՝ Երանոս բնակավայրը գտնվում է Գեղարքունյաց լեռնաշղթայի հարավ-արևելյան ստորոտին, Ձագ գետի ստորին հոսանքում, ծովի մակերևույթից 1898-2300 մ բարձրությունների վրա: Համայնքը հյուսիս-արևելքից սահմանակից է Սևանա լճին, հարավից՝ Վարդաձոր համայնքին, արևմուտքից՝ Արարատի մարզին և Գեղարքունիք համայնքին: Բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված «Սևան» ազգային պարկի հատվածում ռելիեֆը համեմատաբար հարթ է, բնակավայրը շրջապատում են ոչ բարձր բլրանման լեռները:

Երանոս համայնքի վարչական տարածքը կազմում է 5335,78 հեկտար, որից բնակավայրի կառուցապատված տարածքը կազմում է 431,06 հեկտար: Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից գտնվում է 118 կմ, մարզկենտրոն Գավառից՝ 27 կմ, տարածաշրջանային կենտրոն Մարտունուց՝ 17 կմ հեռավորությունների վրա: Համայնքի տարածքով անցնում է Մ-10՝ Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության և Երանոս-Ծակքար միջհամայնքային ճանապարհները: Համայնքի կլիման ինչպես Գեղարքունիքի մարզը ամբողջությամբ գտնվում է կլիմայական ցուրտ գոտում: Համայնքի բարձրության նիշի հետ կապված բնորոշ է զով, քամոտ, օպտիմալ խոնավությամբ ամառ՝ միջին ջերմաստիճանը հուլիսին +18°C, օդի հարաբերական խոնավությունը՝ 45-60 %, քամու միջին արագությունը՝ 3.0-6.0 մ/վ, իսկ ձմեռը շատ ցուրտ է, քամոտ, խոնավ: Համայնքի տարածքն ընդգրկում է ցածր և միջին լեռնաանտառային, միջին լեռնային տափաստանային, միջին լեռնային, մարգագետնատափաստանային և մասամբ բարձր լեռնային մերձալպյան գոտիները: Բնակավայրն ամբողջովին տափաստանային գոտում է:

Նախկին բնակիչները 1829-30թթ. գաղթել են Ալաշկերտից, Մուշից, Խաստուր գյուղից: Համայնքի բնակչությունը կազմում է 2024թ. տարեսկզբի դրությամբ կազմում է 5401 մարդ: Գյուղում առկա են դպրոցներ՝ թիվ 1 և թիվ 2, մանկապարտեզ, «Երանոսի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ, մշակույթի տուն, դեղատուն, ատամնաբուժարան, բենզալցակայան, փոքր առևտրի օբյեկտներ: Համայնքի վարչական սահմաններում՝ բնական աղբյուրների հարակից տարածքներում և ազգային պարկի տարածքում կան հանգստի գոտիներ:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի մշակությամբ:

Գեղարքունյաց լեռնաշղթայի հարավ-արևելյան ստորոտը, որտեղ գտնվում է Երանոս գյուղը, հարուստ է ամրոցներով, դամբարանադաշտերով՝ վերագրվում են մ.թ.ա 2-րդ-1-ին հազարամյակներին և ուշ բրոնզի-վաղ երկաթի ժամանակաշրջաններին: Դամբարանադաշտերը հարուստ են կրովեխներով, երևում են թաղման խեցերը: միջնադարյան գյուղատեղիներով, եկեղեցիներով ու մատուռներով և բազմաթիվ խաչքարերով, որոնք սփռված են գերեզմանոցներում և գյուղատեղիներում:

Գյուղից մոտ 2 կմ արևմուտք՝ ժայռոտ բարձունքի գագաթին, գտնվում է «Նեղ Բողազ» ամրոցը (մ.թ.ա 3-րդ-2-րդ հազարամյակներ)՝ շրջապատված խոշոր անկանոն քարերից կառուցված աշտարակավոր պարիսպներով: Առկա են բազմաթիվ շինությունների հետքեր: Գյուղամիջում է գտնվում Մուրբ Աստվածածին եկեղեցին:

Համայնքում բնակիչներն իրենց տնամերձ հողամասերում հիմնականում աճեցնում են

կարտոֆիլ, բանջարաբուստանային կուլտուրաներ, ինչպես նաև զբաղվում պտղաբուծությամբ (խնձոր, տանձ, սալոր), իսկ վարելահողերում մշակում են հացահատիկային, կերային մշակաբույսեր՝ հիմնականում սեփական կարիքները հոգալու համար: Համայնքի բնակիչները լուրջ խնդիրներ ու դժվարություններ ունեն արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում:

Համայնքի հիմնախնդիրներից է ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի) բացակայությունը, փողոցային ցանցի անբարեկարգ վիճակը, գերեզմանատան որոշ տարածքների պարիսպների, զբոսաշրջության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը, երիտասարդների արտագաղթը:

Նախատեսվում է Համայնքի թիվ 2 միջնակարգ դպրոցի վթարային շենքի քանդում և նոր մասնաշենքի կառուցում:

9. Նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնառեսուրսները (շինարարության և շահագործման, փակման փուլեր)

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երանոս բանկավայրի վարչական տարածքում գտնվող գործող թիվ 2 միջնակարգ դպրոցի տարածքում՝ 0,87հա մակերեսի վրա: Երանոսի թիվ 2 դպրոցի շենքը նախատեսվում է ապամոնտաժել, քանդել և նույն տեղում կառուցել նորը՝ երկհարկանի, որոշ տեղերում՝ եռահարկ շենք, մինչև 12 մետր բարձրությամբ:

9.1 Շահագործման փուլ. Դպրոցի կառուցման ծրագիրն իրականացվելու է դպրոցների Սեյսմիկ անվտանգության բարելաման(ՍԱԲ) ծրագրի շրջանակում՝ Ասիական Զարգացման բանկի(ԱԶԲ) աջակցությամբ, արդյունքների վրա հիմնված վարկավորման (ԱՀՎ)մոդելի կիրառմամբ:

Համաձայն Մարտունի համայնքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվության՝ նախատեսվող կառուցապատումը՝ 33% է, կանաչապատմանը՝ 10%:

Դպրոցի կառուցման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.

1. Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 8700մ²(100%)
2. Ընդհանուր կառուցապատման մակերեսը՝ 3000մ²(34.5%)
3. Սալվածքներ՝ 433.50մ²(4.9%)
4. Օժանդակ կառուցապատում՝ 473.2մ²(5,4%)
4. Կանաչապատման մակերեսը՝ 2146.90մ²(24,7%)
5. Ասֆալտբետոնե սպասարկման ճանապարհներ՝ 2370.45մ²(27.3%)
6. Հենապատ, Պարիսպ՝ 275.95մ²(3.2%)
7. Դասասենյակների ընդհանուր քանակը՝ 26 հատ
8. Աշակերտների թիվը՝ 288 աշակերտ
8. Կաթսայատուն՝ 26.38մ²
9. Ավտոկայանատեղի՝ ծառայողական մեքենաների համար-4 հատ
10. Մաքրման կայան:

Նախատեսվող նոր դպրոցն ունենալու է 4 մասնաշենք: Ունենալու են կիսանկուղային հարկ՝ -3.000 նիշում: Առաջին հարկը համապատասխանում է 0.000 նիշին, որը համապատասխանում է 1511.70 բացարձակ նիշին:

1-ին մասնաշենքն ունենալու է ուղղանկյուն ուրվագիծ՝ 20.0x26.60մ չափերի՝ 3 վերգետնյա հարկերով: Ստորգետնյա հարկի բարձրությունը կազմելու է 2.7մ:

2-րդ՝ ուսումնա-վարչական մասնաշենքն ունենալու է բարդ ռելիեֆային հատակագիծ՝ 34.00/В/х49.50/1 մ չափերի՝ 3 վերգետնյա/կենտրոնական/ և 1 ստորգետնյա/կիսանկուղային/ հարկերով: Նկուղային հարկում տեղակայված է ճաշարանի համար սպասարկման մակերեսներ, պահեստարաններ, ապաստարան: Առաջին և հարկում տեղակայված են մուտքային հարթակը՝ թեքուղիներով նախասրահը, հանդիսությունների դահլիճը, ճաշարանը, կենտրոնական աստիճանները, տնօրենի աշխատասենյակը, վերելակ: 2-3-րդ հարկերում՝ դասասենյակներ, կաբինետ, գրադարան, աշխատասենյակներ:

3-րդ մասնաշենքն ունենալու է ուղղանկյուն ուրվագիծ՝ 20.0x29.40մ չափերի՝ 3 վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկերով: Միջին և բարձր դասարանների դպրոցն է, որտեղ տեղակայված են հրաձգարան, սանհանգույցներ, խոհանոցի համար նախատեսված սենյեր, միջին և բարձր դասարանների դասասենյակներ, սանհանգույցներ, ուսուչցանոց, հաշվապահություն, մասնագիտական դասասենյակներ՝ լանորատորիայով:

4-րդ մասնաշենքը՝ մարզադահլիճ, ունենալու է ուղղանկյուն ուրվագիծ 15.5x24.0մ չափերի, 1 հարկանի ելունային մասով:

Մասնաշենքերում հիմնականում տեղակայված են տարրական դպրոցի աշակերտների ներառականի համար դասարաններ, ուսուչցանոց, բուժ. կետ, սան, հանգույցներ և այլն:

Կիսանկուղային հարկում տեղակայված են լինելու պարզ ապաստարան, հրաձգարան. սան. հանգույցներ, տնտեսական նկուղ, էլ. վահանակային սենք և այլն: Մասնաշենքերը կառուցվելու են միաձույլ ե/բետոնյա շրջանակային հիմնակմախքներով, ապահովված են ներքին և արտաքին աստիճանավանդակներով, լիֆտով: Երեսապատվելու են կախովի օդափոխվող ճակատներով՝ 12մմ հաստության ֆիբրոցեմենտե սալիկներով:

Դպրոցի տանիքածածկը միալանջ է՝ իրականացվելու է պողպատյա գլոցվածքներից՝ գունավոր մետաղական պրոֆիլավոր վրաքաշով: Ջրահեռացումը՝ արտաքին կազմակերպված:

Նախատեսվում է 3100.20մ² մակերեսով խոտածածկով սպորտդաշտ և 432.45մ² մակերեսով ռետինե ծածկով տարածք:

Դպրոցի տարածքը ցանկապատվելու է 359.00զժմ երկարության մետաղական ճաղաշարով՝ 2 հատ դարպասով և 1 հատ մետաղական դռնակով: Կառուցվելու է 70.90զժմ երկարության հենապատ: Տարածքն ապահովված է լինելու արտաքին լուսավորությամբ:

Նախագիծը մշակելիս հաշվի են առնվել ինչպես դիտարկվող տարածքի հատակագծի երկրաչափական ուրվագիծը, դիտարկվող և հարակից տարածքների գոյություն ունեցող կառուցապատումը, տեղանքի ռելիեֆային առանձնահատկություններն, այնպես էլ պատվիրատուի պահանջները:

Դպրոցի կառուցապատման հատակագծային լուծումներում ներառվել են. տարրական, ներառական, սպորտային դահլիճները, ադմինիստրատիվ մասնաշենքը, նոր

կաթսայատունը, մաքրման կայանը, բացօթյա մարզահրապարակ և խաղահրապարակը: Նախատեսվող մասնաշենքերն ապահովված են լինելու ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման, օդափոխության, հրդեհամարման համակարգերով:

Շենքի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆII-8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների:

Շահագործման փուլում շենքն ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Դպրոցի նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12. 04.2018թ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան: Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են՝

- 1) ջեռուցման համակարգերին.
- 2) տաք ջրամատակարարման համակարգերին.
- 3) օդի լավորակման համակարգերին.
- 4) ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը.
- 5) լուսավորության համակարգերին:

Նկար 13



ԻՅ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍԻ ԹԻՎ 2 ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԷՆՏԱԿԱՆ ԵՆԵՐԳԱՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

շենքն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով:

Նախատեսվում է շենքի հարկերում տեղադրել կրակմարիչներ:

Շենքերն ապահովված են լինելու էվակուացիոն ելքերով:

Գազամատակարարում. շենքի գազամատակարարումը կատարվելու է համաձայն «Գազայրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված գազաֆիկացման և գազամատակարարման տեխնիկական պայմանի: Գազամատակարարումը կատարվելու է 180մ հեռավորության վրա գտնվող գազատարից՝ պողպատե խողովակներով:

Էլեկտրամատակարարումը կատարվելու է տարածքում գոյություն ունեցող 10կվտ օդային գիծ ունեցող տրանսֆորմատորային ենթակայանից, որը կառուցապատման փուլում կապամոնտաժվի և կտեղափոխվի դպրոցին կից տարածք՝ «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ համաձայնեցված: Էլեկտրասնուցման մալուխագիծը լինելու է ստորգետնյա:

Ջերմամատակարարում. Շենքի ջերմամատակարարումը նախատեսված է՝ կաթսայատնից՝ տաք ջրամատակարարման և ջեռուցման միջոցով: Տաք ջրամատակարարման ներքին ցանցը կատարվելու է պողպատյա խողովակներով՝ ավազե հիմքով, անշարժ հենարաններով: Ջերմատար ջրի ջերմաստիճանը կազմելու է 60°C:

Կաթսայատուն. կառուցվելու է նոր կաթսայատուն 26.38մ² մակերեսի վրա՝ բնական քարի շարվածքով՝ 30մմ հաստությամբ բազալտի և սև տուֆի սալիկապատումով: Կաթսայատունը կառուցվելու է անհրաժեշտ ներքին հարդարումով, դուռ, պատուհան՝ ալյումինե, երկշերտ ապակեփաթեթով, հատակի սալիկապատումով: Այն ներառելու է անձնակազմի պահասենյակ՝ 1,29մ² մակերեսով: Կաթսայատունն ապահովված է լինելու անհրաժեշտ օդափոխության, հակահրդեհային, հակաձխային ավտոմատ կառավարման համակարգերով, տեխնիկական հագեցվածության էլեմենտներով: Տեղադրվելու է 2 հատ կաթսա, յուրաքանչյուրը N=465/423կվտ և 1հատ՝ 74կվտ արտադրողականության: կաթսաները համալրված են ավտոմատացված կառավարման այրիչներով:

Կաթսայատունն աշխատելու է բնական գազով: Անհրաժեշտության դեպքում կաթսայատունն աշխատելու է նաև այլընտրանքային վառելիքով՝ դիզվառելիքով: Կաթսայատան գազի ծախսը կազմելու է 104,3մ³/ժամ: Կաթսայատան գազամատակարարումը կատարվելու է շենքի մոտով անցնող արտաքին ցանցից:

Հակահրդեհային անվտանգություն. Հրդեհաանվտանգության նպատակով նախատեսվում է շենքերում տեղադրել հակահրդեհային հիդրատներով՝ յուրաքանչյուր հարկում 10 հատ, ինչպես նաև օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակաձխային, արտաձման համակարգերով: Շենքի նկուղային հարկում տեղադրվելու է նաև 2 հատ 50մ³ տարողության ջրի բաքեր:

Դպրոցի շենքն ապահովված է լինելու էվակուացիոն ելքերով, ունենալու է 2 լիֆտ:

Օդափոխություն. դպրոցը և կաթսայատունն ապահովված են օդափոխության ներածման և արտածման համակարգերով, որոնց ճյուղավորումների վրա տեղադրվում են ջերմակարգավորիչ, ջերմապոլիարելինային փականներ և եռաբաշխիչներ: Կաթսայատան արտածվող օդի ծավալը կազմում է 311,04մ³/ժամ, ներածվող օդի քանակը՝ 1538,1մ³/ժամ: Օդի արտածման համար կտեղադրվեն դեֆլեկտորներ՝ D=300, իսկ ներածման համար կտեղադրվեն ժայուղային ցանց՝ 1 հատ: Օդափոխության արտածումն իրականացվում է

արհեստական եղանակով՝ օդը մտնում է ռեկուպերատորային ագրեգատ, տաքացնում է ներածվող օդը՝ խառնման միջոցով, այնուհետև դուրս է մղվում արտաքին միջավայր: Տնօրենի, ուսուցիչների, համակարգիչների սենյակներում նախատեսված օդի ներածման լավորակման կոնդիցիոներներ: Ման հանգույցներից, դասարաններից օդի արտածումն իրականացվում է բնական եղանակով: նկուղային հարկերում օդափոխությունն իրականացվում է գլանային ռեկուպերատորներով: Օդատարները լինելու են 0,5-0,7մ տրամագծով՝ ցինկապատ պողպատից, ունենալու է հովանոց տանիքում:

Բոլոր օդատարները տեղադրվում են առաստաղի տակ՝ կեղծ առաստաղի մեջ, իսկ ձեղնահարկում՝ մեկուսացվում են արհեստական բամբակով: Օդի ներածման և արտածման համար տեղադրվում են կարգավորող ճաղավանդակներ:

Ջրամատակարարում. Խմելու տնտեսական, հակահրդեհային ջրամատակարարում. դպրոցի շենքի ջրամատակարարումն իրականացվելու է Մարտունի համայնքի՝ Երանոս բնակավայրի ջրատարից: Հավելված 4

Սառը ջրի սնուցումը կատարվելու է բնակավայրի ջրմուղի ցանցից 63մ խողովակով՝ պոլիպրոլինե խողովակներով: Ջրագծի վրա տեղադրվելու է դիտահոր, ջրաչափական հանգույց, հակահրդեհային հիդրատ:

Տաք ջրամատակարարումն իրականացվում է դպրոցի տարածքում նախատեսված անհատական կաթսայատնից:

Կենցաղային կոյուղի. բնակավայրում բացակայում է կոյուղատարար: Ուստի շահագործման փուլում կենցաղային կեղտաջրերի հեռացման համար տեղադրվելու է 100մ³ ծավալի սեպտիկ հոր՝ մաքրման կայան: Հորի կոնստրուկցիան իրականացվելու է B25 դասի անջրթափանց բետոնից: Պատերի արտաքին մակերեսը հիդրոմեկուսացվելու է երկշերտ բիտումային մածիկով: Ունենալու է օդափոխության խողովակ: Կեղտաջրերը հեռացվելու են կոյուղու պոլիէթիլենային բարձր խտության ծալքավոր խողովակներով՝ Ø150մմ: Բոլոր անհրաժեշտ տեղերում նախատեսված են կլոր հատվածքի ե/բ հավաքովի էլեմենտներից դիտահորեր:

Հեղեղատար համակարգ. տանիքներից անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրհոսի ցանցով հեռանում են բակային ցանց, որը միանում է d=500մմ տրամագծով անձրևատար կոյուղու փողոցային հեղեղատարին, որի միացման հատվածում կառուցվելու է դիտահոր: Համակարգը նախատեսված է Ø200+250մմ տրամագծով բարձր խտության ծալքավոր խողովակներով, անհրաժեշտ տեղերում տեղադրվելու են Ø1000մմ տրամագծով դիտահորեր:

Արևային վահանակների տեղադրում: տանիքում նախատեսվում է տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգ՝ էլեկտրական էներգիայի արտադրության, լուսավորության և ծախսերի փոխհատուցման նպատակով: Կայանը կկառուցվի տանիքի 2650մ² մակերեսի վրա, որտեղ ԱՖՎՎ-ների զբաղեցրած մակերեսը կազմում է 521.82մ², իսկ տարածքի մնացած մասը՝ 2128,18մ², ծառայում է ենթակառուցվածքների սպասարկման համար: Տեղադրվելու է 112.11 կՎտ դրվածքային հզորությամբ արևային կայան, բաղկացած 2 ենթասեղաններից.

- 1-ին ենթասեղան - 110 հատ 555Վտ հզորությամբ վահանակ, ընդամենը 61.05 կՎտ,
- 2-րդ ենթասեղան - 92 հատ 555Վտ հզորությամբ վահանակ, ընդամենը 51.06 կՎտ:

Վահանակների ընդհանուր թիվ կազմելու է 202 հատ:

Փոխակերպիչների ընդհանուր դրվածքային հզորությունը կազմում է 110կՎտ, ԱՖՎՎ-ների ընդհանուր դրվածքային հզորությունը՝ 112.11: Արևային ֆոտովոլտային համակարգերը էլեկտրական ցանցին կմիացվեն փոխհոսքերի հաշվառման սկզբունքով: Սպառողի մոտ տեղադրվելու է երկկողմանի հաշվիչ (դարձվափոխիչային): Կայանի համար ընտրված է 1

հատ 50 կՎտ և 1h 60կՎտ հզորությամբ գծային ցանցային փոխակերպիչներ: Արևային կայանի հողանցումն իրականացված է դպրոցի շենքին կից՝ կոշտ (շերտապողպատ 4*40) կամ ճկուն (BBF ՌԴ (A) 1x25) միացմամբ՝ միանալով շենքի ընդհանուր էլ. մատակարարման հողանցման համակարգին:

Արևային վահանակների մոդուլները պետք է երաշխավորված լինեն էլքային հզորության ոչ պակաս, քան 93%՝ շահագործման 10-րդ տարվա վերջում, և 84,8%՝ շահագործման 25-րդ տարվա վերջում: Մոդուլները պետք է երաշխավորվեն առնվազն 12 տարով, օգտագործված նյութերի թերությունների և աշխատողների հմտությունների պատճառով առաջացած խափանումների դեպքում ենթակա են փոխարինման: Փոխակերպիչները և ԱՖՎՎ-ները պետք է ապահովեն համապատասխան ստանդարտների և սերտիֆիկատների պահանջներին կամ ունենան համարժեք փաստաթղթեր որակի մասին:

Աղբահեռացում. աղբահեռացումը կատարվում է Մարտունու համայնքապետարանի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ 5կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր: Շահագործման փուլում տեղադրվելու են 2 հատ 1*1,5 չափերի աղբամաններ:

9.2. Շինարարության փուլ.

Քանդման փուլ: Տարածքում կատարվելու են քանդման և ապամոնտաժման աշխատանքներ: Քանդվելու են հին մասնաշենքերը՝ պատերը, բետոնյա աստիճանները, ցանկապատը և այլն:

Ապամոնտաժվելու են բոլոր կոմունիակացիոն համակարգերը, տանիքների ջրահեռացման համակարգերը, դուռ-պատուհանները, մետաղական աստիճանները, մասնաշենքերի մետաղական տանիքածածկը, ե/բետոնյա սալերը: Ապամոնտաժվելու է նաև տարածքում առկա տրանսֆորմատորային ենթակայանը, տեղափոխվելու է դպրոցին հարող տարածք: Քանդման աշխատանքները տևելու է 4 ամիս: Ներգրավվելու են 20 մարդ:

Քանդման և ապամոնտաժման աշխատանքները կատարվելու են մեխանիզմներով՝ առանց պայթեցման:

Քանդման և ապամոնտաժման արդյունքում առաջանալու է 7476,90մ³ ծավալով շինաղբ՝ քար, մետաղների նմացորդներ,բետոնի մնացորդներ, փայտ և այլն: Տարածքում կատարվելու է թափոնների տեսակավորում և առանձնացում: Պիտանի թափոնները կօգտագործվեն շինարարության ընթացքում, իսկ ոչ պիտանի թափոնները տեսակավորելուց հետո կհանձնվեն մասնագիտական կազմակերպություններին կամ կտեղափոխվեն աղբավայր՝ համայնքի համաձայնությամբ:

Շին. աշխատանքները իրականացնելու համար նախատեսվում է հետևյալ միջոցառումներ.

- հողային աշխատանքներ, շինարարական հրապարակի կազմակերպում,
- բետոնե և երկաթբետոնե աշխատանքներ,
- Քարային աշխատանքներ, տանիքային աշխատանքներ,
- հարդարման և երեսապատման աշխատանքների իրականացում և այլն:

Շինարարական հրապարակ. դպրոցի շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինարարական հրապարակն ամբողջ դպրոցի տարածքն է:

Շին. հրապարակում տեղադրվելու են.

- ավտոմեքենաների, մեխանիզմների կայանման, առասանման ճուպանների տեղակայման վայրեր,
- պահակատուն,
- շինարարական նյութերի, գործիքների պահեստներ, բացօթյա պահեստ,
- աշխատողների համար ժամանակավոր շինություններ՝ գրասենյակ, հանդերձարան, սննդի ընդունման կետ՝ ճաշարան, լվացարան, ցնցուղարան,
- բիոզուգարան,
- աղբաման՝ կենցաղային աղբի համար
- հետադարձ ջրամատակարարումով պոմպ՝ անիվների լվացման համար,
- հակահրդեհային վահանակ,
- շինհրապարակում լինելու են նաև 7,30x3 մ չափի ավտոմեքենաների անիվների լվացման հարթակ:

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ՝ 2 լյուքսից ոչ պակաս:

Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածքը:

Շինհրապարակի կազմակերպման հատակագիծը








Գծապակեր 3



**ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՆՎԱՆԱՑԱՆԿ**


Հ/Հ	ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	ԾԱՆՈԹՈՒԹՅ.
I	Պահակատուն	վագոն-տնակ
II	Գրասենյակ	վագոն-տնակ
III	Հանդերձարան	վագոն-տնակ
IV	Ճաշարան	վագոն-տնակ
V	Լվացարան-ցնցուղարան	վագոն-տնակ
VI	Պատրաստի գուցարանախցիկ	վագոն-տնակ
VII	Հակահրդեհային վահանակ	
VIII	Հետադարձ ջրամատակարարումով պոմպ մեքենաների անխցիները վանայտ համար	
IX	Կենցաղային աղբի աղբաման	
X	Քանդած շինակառուցի կուտակման տեղ	
XI	Զուած շինակառուցի տեղադրման տարածք	
XII	Շինակառուցի կուտակման տարածք	

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

-  Ժամանակավոր ցանկապատ
-  Գոյություն ունեցող ցանկապատ
-  Գոյություն ունեցող դարպասներ
-  Ժամանակավոր լուսավորության համակարգ
-  Ժամանակավոր ջրաղիծ
-  Թրթուրավոր էրեկավառար
-  Ավտոմեքենաբառի

**ՔԱՆՎԱՆԱՑՄԱՆ ԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՆՎԱՆԱՑԱՆԿ**

Հ/Հ	ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	ԾԱՆՈԹՈՒԹՅ.
3	Մասնաշենք /2 հարկ/	քանդվող
4	Մասնաշենք /4 հարկ/	քանդվող












ՔԱՆՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇՐՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հ/Հ	ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	ԾԱՆՈԹՈՒԹՅ.
4	Մասնաշենք /4 հարկ/	բանդվող


ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇՐՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հ/Հ	ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	ԾԱՆՈԹՈՒԹՅ.
I	Պահակատուն	վազոն-տնակ
II	Գրասենյակ	վազոն-տնակ
III	Հանդիրձարան	վազոն-տնակ
IV	Ճաշարան	վազոն-տնակ
V	Լվացարան-ցնցոլարան	վազոն-տնակ
VI	Պատրաստի գուցարանախցիկ	վազոն-տնակ
VII	Հակաֆրեդեհային վահանակ	
VIII	Չեռայարձ ջրամատակարարմանով սյունք մեքենաների անխվենքը պահելու համար	
IX	Կենցաղային տղրի ուղբաման	
X	Քանդած շինանյութի կուտակման տեղ	
XI	Զտած շինանյութի տեղադրման տարածք	
XII	Շինաղրի կուտակման տարածք	

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ՝

-  Ժամանակավոր ցանկապատ
-  Գոյություն ունեցող ցանկապատ
-  Գոյություն ունեցող դարպասներ
-  Ժամանակավոր լուսավորության համակարգ
-  Ժամանակավոր ջրագիծ
-  Կցորդիչով ավտոմեքենա
-  Ավտոինքնաքարի
-  Թրթուրավոր կտուց
-  Ավառվերհան -16.0մ

ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ



Հ/Հ	ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	ԾԱՌՈՒԹՅ
I	Պահակատուն	վազոն-տնակ
II	Գրասենյակ	վազոն-տնակ
III	Ճաշարան	վազոն-տնակ
IV	Լվացարան-ցնցոյղարան	վազոն-տնակ
V	Հանդերձարան	վազոն-տնակ
VI	Պատրաստի զոցարանահյնիկ	
VII	Հակահրդեհային վառարան	
VIII	Հետադարձ ջրատնակարարամով զբնակ միջինների անիվները վաճառել համար	
IX	Կենցաղային ստրի աղբաման	
X	Քանդած գրունտի կուտակման տեղի	
XI	Շինարարի կուտակման տարածք	

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	
1	Հիմնական տնակատան մասնաշենք (ներստի) "ա" մասնաշենք "բ" մասնաշենք "գ" մասնաշենք - մարզադահլիճ "դ" մասնաշենք - հանդիսարանների դահլիճ
4	Նոր տեղադրվող 2 հատ սղարատ
5	Նոր տեղադրվող 1 հատ սղարատ
6	Գործարան ունեցող է կերակրատան

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Գործարան ունեցող ցանկապատ
- Կառուցվող ճաղաչարավ ցանկապատ
- Գործարան ունեցող դարպասներ
- Ժամանակավոր լուսավորության համակարգ
- Ժամանակավոր ջրափն
- Թրթրավոր երկավատոր
- Ավտոմեքանիկ

ԸՄՔՐՈՐ	Վ. ԲԱԲԱՆ	ԻՐԱՅԵՐ ԻՐԱՅԵՐԻ ԳՐԱԳՐԱՐԱՆ ԵՎ ԱՐԿԻՏԵՐԱՆԻ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԵՆՏԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ	ՏԵՄԱՆ	Ն. ԲԱԲԱՆ	Ն. ԲԱԲԱՆ	Ն. ԲԱԲԱՆ
		ԻՐԱՅԵՐ ԻՐԱՅԵՐԻ ԳՐԱԳՐԱՐԱՆ ԵՎ ԱՐԿԻՏԵՐԱՆԻ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԵՆՏԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ	ՄԵ	ՄԵ	ՄԵ	ՄԵ
		ԻՐԱՅԵՐ ԻՐԱՅԵՐԻ ԳՐԱԳՐԱՐԱՆ ԵՎ ԱՐԿԻՏԵՐԱՆԻ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԵՆՏԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ	ՄԵ	ՄԵ	ՄԵ	ՄԵ

Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վազոն տնակներում:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների վլացում, շինհրապարակից դուրս գալուց առաջ: նախատեսված է 1 հատ անիվների վլացման հարթակ՝ 7,30x3.0մ վլացման սարքի միջոցով: Շինհրապարակում անիվների վլացումից առաջացած հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող բիոզուգարան: Իսկ անջրնաջրերից առաջացող հոսքաջրերը հեռացվում են դեպի տարածքում տեղադրվող 100մ³ չափերի պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ արտադրական հրապարակի ջրցանման և անիվների վլացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Տարածքը մասնակի ցանկապատված, որը ծառայելու է որպես շին. հրապարակի ցանկապատ, իսկ որտեղ բացակայում է ցանկապատը տեղադրվելու է մետաղաթիթեղից

Ժամանակավոր ցանկապատ: Ցանկապատի արտաքին մասում տեղադրվելու է տեղեկատվական պաստառ: Շինհրապարակն ապահովվելու է էլեկտրականությամբ, գիշերային լուսավորությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Ելնելով առկա պայմաններից շինարարության փուլում նախատեսվում են անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ, հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

Հողային աշխատանքներ. կառուցապատման ժամանակ կատարվելու են 9424,55մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից կատարվելու է 2144.40մ³ ծավալի գրունտների լիցք, ետլիցք՝ 2918.70մ³. իսկ մնացած՝ 4361.45մ³ ծավալի հողային զանգվածը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր: Հողային աշխատանքները կատարվելու են ձեռքի մեխանիկական գործիքներով և մեխանիզմներով:

Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շին մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿ III-4-81-ի պահանջների համապատասխան:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, շինարարական

աշխատանքներ. գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- Թրթուրավոր կռունկ-3 հատ,
- Թրթուրավոր էքսկավատոր 2հատ
- Բուլդոզեր 1հատ
- Ավտովերհան-2 հատ
- Բեռնատար ինքնաթափ մեքենա- 1 հատ,
- էքսկավատոր- 1 հատ
- Կցորդով կողավոր ավտոմեքենա
- Այլ մեխանիզմներ

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբոնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 5⁰ -ից ոչ ավել թեքություն:

Շինտեխնիկական լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկական կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ շինարարական հրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է մանրախճի փռում կամ բետոնասալերի օգտագործում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու

նպատակով: Աղտոտված մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից: Ակտավորվելու են թաքնված աշխատանքները, գրանցելով վարման մատյանում:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ՝ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

Էլեկտրամատակարարում. շինարարության ընթացքում էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված 17.10.2022թ. տրված ԴԳ 5893 տեխնիկական պայմանի, միանալով 30կՎԱ հզորության ենթակայանին, տեղադրելով առանձին հաշվիչ:

Շահագործման հանձնելուց առաջ կատարվելու է շինության էներգաարդյունավետության համապատասխանության գնահատում, կկիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված Է և (կամ) Ձ1 ընթացակարգերի պահանջները:

Ջրամատակարարում- Շինարարության համար աշխատողների համար պահանջվող խմելու ջուրը ժամանակավոր վերցվում է տարածքի կողքի ճանապարհով անցնող բնակավայրի ջրատարից, որի վրա համապատասխան հորում տեղադրվելու է եռաբաշխիչ և հաշվիչ:

Հրդեհաշիջման համակարգ. շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվելու են «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին»-ի կողմից տրված հրահանգներով:

Շինարարական հրապարակում տեղադրվելու է 4 հրդեհաշիջման վահանակ՝ դարպասների մոտ, յուրաքանչյուրի վրա հակահրդեհային կրակմարիչներով և հիդրատներով: Շինարարության փուլում տեղադրվելու է նաև 5 տոննա տարողության ջրի բաք՝ հրդեհամարման, ջրցանի նպատակով:

Աղբահեռացում. շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով՝ մոտ 250մ³ ծավալով: Շինաղբի կուտակումը կատարվելու է շինհրապարակում նախատեսված վայրում՝ պարկերի մեջ, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը:

Կենցաղային աղբը կառուցապատման փուլում կազմվելու է 12420կգ/տարի: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5*1 չափերի 2 աղբարկղ:

Շինարարության փուլում աղբահեռացումը կարգավորվելու է շինթույլտվության ֆունկցիոնալ պահանջին համապատասխան:

Կանաչապատում. Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ 2146.90մ² մակերեսով: Կանաչապատումը կատարվելու է Մարտունու համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան: Հավելված 8

9.3 Ժամանակացույց

Աշխատանքների ժամանակացույցը կկազմի 28 ամիս: Աշխատողների քանակը ընդունվում է 45 աշխատող, որից 40-ը բանվոր, 5-ԻՏՌ:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն ՄՆԻՊ 1.04.03-85* նորմաներով:

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց

ԳՐԱՐԱՐԱԳԱՆ ԱՇԽԱՏԱՐՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ - սկիզբ

2/2	ԱՇԽԱՏԱՐՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԸՆԴՀԱՆՈՒՐ Ժ Ա Մ Կ Ե Տ Ը 28 - ամս																							
		1		2		3		4		5		6		7		8		9		10		11		12	
		10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր	10 օր
1	Ճամանակակիր շտապօգնության իրականացում, Ճամանակակիր դարպասների ու դռնակների տեղադրում																								
2	Ճամանակակիր վազան-տնակների տեղադրում																								
3	Տնտեսական տնկեր (կանաչիցիվների, կ, հարթդաշտերի, կյանկների, կարպոսի, ջրագի, գազատարի տպամուսնում)																								
4	"Ա" և "Բ" մասնաշենքերի համար վտարում 3-րդ կարգի գրանտի շտապ 1.65մ ² շերտի տարադրությամբ էքսպլուատորով կուտակումով																								
5	Քանդած գրանտի բարձրում 1.65մ ² շերտի տարադրությամբ էքսպլուատորով ինքնաթիֆերի ու տեղափոխում																								
6	"Ա" և "Բ" մասնաշենքերի համար վտարում 4-րդ կարգի գրանտի շտապ 1.65մ ² շերտի տարադրությամբ էքսպլուատորով կուտակումով																								
7	Քանդած գրանտի տեղափոխում թողարկելով լցք և տրամադրում																								
8	Ավելացած գրանտի բարձրում 1.65մ ² շերտի տարադրությամբ էքսպլուատորով ինքնաթիֆերի ու տեղափոխում																								
9	Փոստայնի հարթկում թողարկում																								
10	Կարպասի տպամուսնում և շտապ մագաղկային կանաչաշենքի կնիքի քանակացան հասար "Ա" և "Բ" մասնաշենքերի համար																								
11	"Ա" և "Բ" մասնաշենքերի մագաղկային կանաչաշենք, կնիքի քանակացան																								
12	Կարպասի տպամուսնում և շտապ մագաղկ, պտերի, կեծիների, քեռանցան համար "Ա" և "Բ" մասնաշենքերում մինչև 0.00 կիլո																								
13	"Ա" և "Բ" մասնաշենքերում մուսուկ կիլոմետրի շրջանակապային պտերի, կեծիների պարսիկ պարերի քանակացան մինչև 0.00 կիլո																								
14	Արտաքին պտերի գրանկուսացում, հովից թողարկում և քաղ ու չոր տեղանում յուրացանյուր 50 սմ հաստությամբ լիցքի նետ																								
15	Քանդած գրանտի կոլից ձևում																								
16	Տեխնոլոգիաների տեղադրում ու շտապ արտաքին պտերի շարի ու տանիքանակի համար																								
17	"Ա" և "Բ" մասնաշենքերում մուսուկ կիլոմետրի շրջանակապային պտերի, կեծիների քանակացան 0.00 կիլո																								
18	Մուսուկ կիլոմետրի միջադրային ձածկերի ու ձածկի տարի իրականացում "Բ" և "Գ" մասնաշենքերի համար																								
19	"Ա" և "Բ" մասնաշենքերի քաղ արտաքին տանիքի շար																								
20	"Ա" և "Բ" մասնաշենքերի տանիքների ցածրահար ձածկերի իրականացում																								
21	"Ա" և "Բ" մասնաշենքերի տանիքների գոյությունը կուտակում և քանակացանում աշխատանքներ իրականացնելի մաս																								
22	"Ա" և "Բ" մասնաշենքերի տանիքների գրանտի կապարանով և հակադրողների կուտակումի իրականացում																								
23	"Ա" և "Բ" մասնաշենքերի տանիքների մատակարարները ձածկի իրականացում																								
24	"Ա" և "Բ" մասնաշենքերի տանիքների ցածրահարի կանաչաշենքի իրականացում, հոջև անտիճակների տեղադրում և մատակարար կուտակումների կերպ																								
25	Տեխնոլոգիաների տեղադրում և շտապ կերպի միջադրային և միջուկների աշխատանքների կամ																								
26	Կերպի միջուկների և միջուկների իրականացում																								
27	Տեխնոլոգիաների ցածրահար ձածկերի																								
28	"Գ" մասնաշենքի կնիքի համար կրտսերում շտապ 3-րդ կարգի գրանտում 1.65մ ² շերտի տարադրությամբ էքսպլուատորով կուտակումով																								
29	Ավելացած գրանտի բարձրում 1.65մ ² շերտի տարադրությամբ էքսպլուատորով ինքնաթիֆերի ու տեղափոխում																								
30	"Գ" մասնաշենքի մագաղկային կանաչաշենքի, կնիքի քանակացան համար կուտակում և տպամուսնում և շտապ																								
31	"Գ" մասնաշենքի մագաղկային կանաչաշենք, կնիքի քանակացան																								
32	Կարպասի տպամուսնում և շտապ մագաղկ, պտերի, կեծիների, քեռանցան համար "Գ" մասնաշենքերում մինչև 0.00 կիլո և քանակացան																								
33	Արտաքին պտերի գրանկուսացում, հովից թողարկում և քաղ ու չոր տեղանում յուրացանյուր 50 սմ հաստությամբ լիցքի նետ																								
34	Քանդած գրանտի կոլից ձևում																								

ԴԻՐԵԿՏՐ	Ր. ԲԱԶԱՅԷ	ՍՐԵՄԻ ԻՐԱԿԱՆՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ԿՆԻՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՐՔՆԵՐԻ ԳՐԱՐԱՐԱՑՈՒՅՑ	ՍՐԵՄԻ ԻՐԱԿԱՆՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ԿՆԻՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՐՔՆԵՐԻ ԳՐԱՐԱՐԱՑՈՒՅՑ	ՍՐԵՄԻ ԻՐԱԿԱՆՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ԿՆԻՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՐՔՆԵՐԻ ԳՐԱՐԱՐԱՑՈՒՅՑ	ՍՐԵՄԻ ԻՐԱԿԱՆՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ԿՆԻՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՐՔՆԵՐԻ ԳՐԱՐԱՐԱՑՈՒՅՑ
ՍՏԱՅԻՆ	ՍՏԱՅԻՆ	ՍՏԱՅԻՆ	ՍՏԱՅԻՆ	ՍՏԱՅԻՆ	ՍՏԱՅԻՆ
ՍՏԱՅԻՆ	ՍՏԱՅԻՆ	ՍՏԱՅԻՆ	ՍՏԱՅԻՆ	ՍՏԱՅԻՆ	ՍՏԱՅԻՆ
ՍՏԱՅԻՆ	ՍՏԱՅԻՆ	ՍՏԱՅԻՆ	ՍՏԱՅԻՆ	ՍՏԱՅԻՆ	ՍՏԱՅԻՆ

№/Ը	ԱՆՈՍԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒՄ 28 - ամիս																							
		8		9		10		11		12		13		14		15		16		17		18		19	
		10	09	10	09	10	09	10	09	10	09	10	09	10	09	10	09	10	09	10	09	10	09	10	09
16	Տախտակամանի տեղադրում ու թանրում պրոսպեկտ պլաների շարժի ու տակնդրամանի համար																								
17	Ա՝ և Ը՝ մասնաշենքերի շարժի պրոսպեկտի պլաների շարժի																								
25	Տախտակամանի տեղադրում և թանրում ներքին միջնաստիկների և միջնորդների սեյսմաստիկների համար																								
26	Ներքին միջնաստիկների և միջնորդների իրականացում																								
27	Հատակների ցրավազի հարթաշերտ																								
28	Կողմ-պատուհանների և պատուհանազգոցների տեղադրում																								
29	Տախտակամանի տեղադրում և թանրում ներքին հարթարման սեյսմաստիկների համար																								
30	Ներքին հարթարման սեյսմաստիկներ																								
31	Հատակների և շրջակների իրականացում																								
32	Ներքին ցրատառակարման և կողմը խողովակների տեղադրում																								
34	Ներքին էլեկտրամատակարարի և տեխնոլոգիաների հարակից իրականացում																								
35	Ներքին էլեկտրամատակարարի և տեխնոլոգիաների սարքավորումների տեղադրում																								
36	Ներքին գազամատակարարման համակարգի իրականացում																								
37	Ֆեռոցման համակարգի իրականացում																								
38	Տախտակամանի տեղադրում ու թանրում պրոսպեկտ պլաների շարժի ու տակնդրամանի համար																								
39	Գ՝ մասնաշենքում միջնաշենքի կառուցման շրջանակապայլակի պլաների, ննջանների, թեմաների և 0.00 կիցի վեր																								
40	Միջնաշենքի/ներքին միջնաշենքի/նախկին ու համակցված շարժի իրականացում Գ՝ մասնաշենքի համար																								
41	Գ՝ մասնաշենքի շարժի պրոսպեկտ պլաների շարժի																								
42	Գ՝ մասնաշենքի տակնդրամանի ցրավազի հարթաշերտի իրականացում																								
43	Գ՝ մասնաշենքի տակնդրամանի ցրավազի հարթաշերտի իրականացում և սեյսմաստիկների իրականացում																								
44	Գ՝ մասնաշենքի տակնդրամանի ցրավազի հարթաշերտի իրականացում և սեյսմաստիկների իրականացում																								
45	Գ՝ մասնաշենքի տակնդրամանի ցրավազի հարթաշերտի իրականացում																								
46	Գ՝ մասնաշենքի տակնդրամանի ցրավազի հարթաշերտի իրականացում, կողմ-պատուհանների տեղադրում և մատակարար կառուցվածքների ննջում																								
47	Տախտակամանի տեղադրում և թանրում ներքին միջնաստիկների և միջնորդների սեյսմաստիկների համար																								
48	Ներքին միջնաստիկների և միջնորդների իրականացում																								
49	Հատակների ցրավազի հարթաշերտ																								
50	Կողմ-պատուհանների և պատուհանազգոցների տեղադրում																								
51	Տախտակամանի տեղադրում և թանրում ներքին հարթարման սեյսմաստիկների համար																								
52	Ներքին հարթարման սեյսմաստիկներ																								
53	Հատակների և շրջակների իրականացում																								
61	Գ՝ մասնաշենքի կիսրների համար իրականացված թանրում 3-րդ կարգի գրունտում 1:65մ շրջակի ստապուրտումը իրականացումը (կառուցվածքային)																								
62	Այլ կազմի գրունտի թանրում 1:65մ շրջակի ստապուրտումը իրականացումը (կառուցվածքային)																								
63	Գ՝ մասնաշենքի մագալկեային ձիմատակի, կիսրների թեմաների համար, կառուցվածքի ստապուրտում և թանրում																								
64	Գ՝ մասնաշենքի մագալկեային ձիմատակի, կիսրների թեմաների																								
65	Ստապուրտի ստապուրտում և թանրում պլաների, պրոնիների, ննջանների թեմաների համար Գ՝ մասնաշենքում մինչև 0.00 կիցի և թեմաներում																								
66	Ստապուրտի պլաների թեմաներում, կապիտ լոպրոզորով և թագ ու չոր տեխնիկայի տարանջնայու 50 ամ հաստի թանրում վերին կետ																								
67	Քանոնի գրանտի նախնայ ձևերում																								

ՏԵՐԵՐԻՎ	Ն. ՆԱԿԱՆԻ	ՊՐՈԿՏ ԵՐԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒՄ 28 - ԳՐԱԿԱՆՈՒՄ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿՈՄՊՅՈՒԹԻԶԱԿԱՆ ՊՐՈԿԵԴՐԱՆԻ ՎԵՐԱԿՐՄԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ	ՏԱԽՏԱԿԱՆ	ՏՐԱՅԻՆ	ՎՈՐԻՆ	ՎՈՐԻՆ	ՍԱՐՔԱՐԱՆԻՍ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ
		ՊՐՈԿԵԴՐԱՆԻ ԿՈՄՊՅՈՒԹԻԶԱԿԱՆ ՊՐՈԿԵԴՐԱՆԻ ՎԵՐԱԿՐՄԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ	ՏԱԽՏԱԿԱՆ	ՏՐԱՅԻՆ	ՎՈՐԻՆ	ՎՈՐԻՆ	ՍԱՐՔԱՐԱՆԻՍ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ
		ՊՐՈԿԵԴՐԱՆԻ ԿՈՄՊՅՈՒԹԻԶԱԿԱՆ ՊՐՈԿԵԴՐԱՆԻ ՎԵՐԱԿՐՄԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ	ՏԱԽՏԱԿԱՆ	ՏՐԱՅԻՆ	ՎՈՐԻՆ	ՎՈՐԻՆ	ՍԱՐՔԱՐԱՆԻՍ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ
		ՊՐՈԿԵԴՐԱՆԻ ԿՈՄՊՅՈՒԹԻԶԱԿԱՆ ՊՐՈԿԵԴՐԱՆԻ ՎԵՐԱԿՐՄԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ	ՏԱԽՏԱԿԱՆ	ՏՐԱՅԻՆ	ՎՈՐԻՆ	ՎՈՐԻՆ	ՍԱՐՔԱՐԱՆԻՍ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ	ՆԱԿԱՆԻ

9.4 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.

Դպրոցական շենքի կառուցման շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, իսկ շահագործման փուլում ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով և բնական գազ:

Ջուր. շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսականցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար: Շինարարության համար պահանջվող ժամանակավոր խմելու ջուրը վերցվում է տարածքի կողքի ճանապարհով անցնող Երանոս բնակավայրի ջրատարից, որի վրա համապատասխան հորում տեղադրվելու է եռաբաշխիչ և հաշվիչ:

Ջրցանի համար տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: պայմանագիրը կկնքվի Կապալառու կազմակերպության կողմից տեխնիկական ջուր մատակարարող կազմակերպության կամ անձի հետ, որն ունի Ջրային օրենսգրքի պահանջներին համապատասխան լիցենզիա: Պայմանագրում կհստակեղցի նաև ջրառի կետը: Տեխնիկական ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5 տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.ի.}} = (n \times N + n1 \times N1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N – ԻՏՍՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

$n1$ – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 40 մարդ

$N1$ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 728օր /28 ամիս/:

$$W_{\text{խ.տ.}} = (5 \times 0.016 + 40 \times 0.025) \times 728 = 786,24 \text{մ}^3/\text{շին. ժամ. } 1,08 \text{մ}^3/\text{օր:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝ $U1 = S1 \times K1 \times T$, որտեղ

$S1$ – ջրվող տարածքի մակերեսը 4050 մ², (շինհրապարակ, ճանապարհներ)

$K1$ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 250 (առավելագույնը 250օր, ներառված կրկնակի ջրցանը)

$$U1 = 4050 \times 0.0015 \times 250 = 1518,75 \text{մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0,375 \text{մ}^3/\text{օր:}$$

Ընդամենը ջրի սպառումը շինարարության փուլում կլինի 2304,99մ³/շին. ժամ:

Կեղտաջրեր. շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում դպրոցի ջրամատակարարման համակարգը միանալու է Երանոս բնակավայրի ջրագծին: Իսկ ջրահեռացման համար նախատեսվում է մտրման կայանի տեղադրում:

Ջրամատակարարման և կոյուղու հաշվարկային ելքերը կազմելու են.

- Սառը ջրամատակարարումը կազմելու է 1,9լ/վրկ,
- տաք ջրամատարարումը՝ 0,8լ/վրկ,
- ներքին հակահրդեհային ջրամատակարարումը՝ 2x2.5 ր/վրկ,
- արտաքին հակահրդեհային ջրամատակարարումը՝ 10.լ/վրկ,
- կոյուղին՝ 3,5լ/վրկ:

Շահագործման փուլում հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

Նյութեր. շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը.

- երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ
- կախովի ցեմենտի պանելներ
- ֆիբրոցեմենտ
- փայտ
- մետաղ, մետաղական կառուցվածքներ
- ամրանային ձողեր
- բարձրորակ երեսապատման սալիկներ, տուֆ
- ապակի
- բարձրորակ սվաղ և ներկ:

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել մուգ մոխրագույն, դարչնագույն Ֆայբերցեմենտային պանելներով՝ քարե շարվածքի իմիտացիայով: Պատուհանները լինելու են ալյումինե, ջերմ.կամրջակով, երկշերտ ապակեփաթեթով: Աստիճանները՝ երեսապատվելու են բազալտե սալիկներով, հատակը՝ մետաղախային խեցեսալիկներով:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախնուրդի պատրաստում չի նախատեսվում: Օգտագործվելու է B12.5 և B25 մակնիշի բետոն, որը պատվիրվելու է մասնագիտացված բետոնային հանգույցներում: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով:

Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից:

Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում:

Շինարարական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով

նախատեսված բարձրության նորմերը: Մորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

10. Շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջություն և վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը(շինարարության և շահագործման փուլերում).

Գործունեության իրականացման ենթակա տարածքը ներառում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս բնակավայրի վարչական տարածքում:

Գործունեությունն իրականացվում է դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝

- օդային ավազան արտանետումների՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում ծխագազերի, հողային աշխատանքների ց փոշու,
- ջրային, հողային ռեսուրսների օգտագործման,
- թափոնների կառավարման,
- կենսաբազմազանության պահպանման,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

Գործունեության իրականացումը չի առաջացնելու լանդշաֆտի ծանրաբեռնվածություն, քանի որ գործունեությունն իրականացվելու է արդեն գոյություն ունեցող դպրոցի տարածքում:

Դպրոցի շենքի կառուցումը կատարվելու է ՀՀ գործող ՀՀՇՆ շինարարական նորմերին և պահանջներին համապատասխան:

10.1 Օդային ավազան.

Գործունեության իրականացման շինարարության փուլում տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ ծխագազերի և հողային աշխատանքների ընթացքում՝ փոշու տեսքով:

Շահագործվող տեխնիկայի և շին հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների հաշվարկի արդյունքները

Աղյուսակ 9

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները	
		գ/վրկ	տ/շին. ժամանակահատված: /2080ժամ/
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	4,2	32.0

CH (ածխաջրածիններ)	0,243	0.028	0.21
NO ₂ (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.3	0.11	8,0
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	0.5	3,78
Ծծմբային անհիդրիդ		0,006	0.0832
Անկազմակերպ փոշու արտանետում		1.3	1.86

Օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է ժամանակավոր և կարճատև: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապարհի փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործունեության իրականացման ընթացքում շինարարական աշխատանքերը կրելու են ժամանակավոր բնույթ, շենքերը տեղադրվելու են առանց փորման աշխատանքների, ուստի ազդեցությունը օդային ավազանի վրա կլինի նվազագույն և ժամանակավոր:

Շինարարության փուլում բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ՝ նորմերը պահպանելու նպատակով:

Հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան միջոցառումներ՝ օդային ավազան արտանետումները կանխարգելելու, մեղմելու նպատակով:

Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցությունները լինելու են կաթսայատան աշխատանքի արդյունքում, ինչը կաթսաների արդիականացման արդյունքում նվազագույնի կհասցվի, համեմատած գոյություն ունեցող կաթսայատան արտանետումների հետ:

Կառուցվելու է նոր կաթսայատուն 26.38մ² մակերեսի վրա:

Տեղադրվելու է 2 հատ կաթսա, յուրաքանչյուրը N=465/423կվտ և 1հատ՝ 74կվտ արտադրողականության: կաթսաները համալրված են ավտոմատացված կառավարման այրիչներով:

Կաթսայատունն աշխատելու է բնական գազով, անհրաժեշտության դեպքում ունենալու է պահեստային՝ դիզվառելիք: Կաթսայատան գազի ծախսը կազմելու է 104,3մ³/ժամ: Կաթսայատան գազամատակարարումը կատարվելու է շենքի մոտով անցնող արտաքին ցանցից:

Ջեռուցման ժամանակահատվածը ք. Մարտունիի համար 226 օր է համաձայն՝ ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմեր:

Դպրոցը 12 ժամ ջեռուցվում է ամբողջ հզորությամբ, օրվա մյուս կեսը 50% հզորությամբ:

226 օր x 12ժ x 104մ³/ժամ = 282861,6 մ³/տարի

226 օր x 12ժ x 52,15մ³/ժամ = 141430,8 մ³/տարի

Ընդամենը տարվա գազի ծախսը կկազմի՝ 424292,4 մ³/տարի:

Աղտոտող նյութերի արտանետման հաշվարկը կաթսայատներից կատարվում է համաձայն՝ «ՄԻՆՉԵՎ 5,8 ՄՎտ ԴԲՎԱԾՔԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՊԻՆԴ, ՀԵՂՈՒԿ ԵՎ ԳԱԶԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԿԱԹՍԱՅԱՏՆԵՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 23 հոկտեմբերի 2012թ.Հ. 268-Ա հրամանի:

Բնական գազի ծախսը կազմելու է 104,3 մ³/ժամ:

Վնասակար նյութերի արտանետումները մթնոլորտ կազմում են՝

$$104,3 \text{մ}^3/\text{ժամ} \times 9,3 \text{կվտմ} / \text{մ}^3 = 970 \text{ կվտ}$$

$$\text{NO}_x = 0,252 \text{ գ/կվտ} \times 970 \text{կվտ} = 244,44 \text{ գ/ժ} = 0,07 \text{ գ/վրկ}$$

$$\text{CO} = 0,108 \text{ գ/կվտ} \times 970 \text{կվտ} = 104,76 \text{ գ/ժ} = 0,03 \text{ գ/վրկ}$$

Վնասակար նյութերի տարեկան արտանետումները մթնոլորտ կազմում են՝

$$424292,4 \text{մ}^3/\text{տարի} \times 9,3 \text{կվտմ} / \text{մ}^3 = 3945919,32 \text{ կվտ}$$

$$\text{NO}_x = 0,252 \text{ գ/կվտ} \times 3945919,32 \text{կվտ} = 994371,67 \text{ գ/10}^6 = 0,99 \text{ տ/տարի}$$

$$\text{CO} = 0,108 \text{ գ/կվտ} \times 3945919,32 \text{կվտ} = 426159,26 \text{ գ/10}^6 = 0,43 \text{ տ/տարի}$$

Կաթսայատներից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը.

Աղյուսակ 10

	Կաթսայատուն	
	գ/վրկ	տ/տարի
NO _x	0,07	0,99
CO	0,03	0,43

Պահեստային դիզվառեղիքով աշխատելու դեպքում՝

Դիզվառեղիքի օրեկան ծախսը- 1մ³/օր

Դիզվառեղիքի տեսակարար կշիռը՝ 850 կգ/մ³

Դիզվառեղիքի ժամական ծախսը կկազմի՝ 850/24 = 35,42 կգ/ժ

Դիզվառեղիքի տարեկան ծախսը կկազմի՝ 5 մ³/տարի, 4250 կգ/տարի

Աղտոտող նյութերի արտանետման հաշվարկը կաթսայատներից կատարվում է համաձայն՝ ՄԻՆՉԵՎ 5,8 ՄՎտ ԴԲՎԱԾՔԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՊԻՆԴ, ՀԵՂՈՒԿ ԵՎ ԳԱԶԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԿԱԹՍԱՅԱՏՆԵՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ-2012թ 23 հոկտեմբերի Հ. 268-Ա հրամանի:

Հաշվետու ժամվա ընթացքում դիզվառեղիքի ծախսը կազմել է 35,42 կգ/ժ, այստեղից՝

$$35,42 \text{կգ} \times 12,56 \text{կվտմ/կգ} = 445 \text{ կվտմ}$$

$$4250 \text{կգ/տարի} \times 12,56 \text{կվտ} = 53380 \text{ կվտմ /տարի}$$

NO_x

$$0,245 \text{գ/կվտմ} \times 445 \text{կվտմ} = 109 \text{գ/ժամ} = 0,03 \text{գ/վրկ}$$

$$\text{Տարեկան} - (0,245 \text{գ/կվտմ} \times 53380 \text{կվտմ/տարի}) / 10^6 = 0,013 \text{տ/տարի}$$

CO

$$0,144 \times 445 = 64,08 \text{գ/ժամ} = 0,02 \text{գ/վրկ}$$

$$\text{Տարեկան} - (0,144 \text{գ/կվտմ} \times 53380 \text{կվտմ/տարի}) / 10^6 = 0,0077 \text{տ/տարի}$$

ՑՕՍ

$$0,036 \times 445 = 16,02 \text{գ/ժամ} = 0,0045 \text{գ/վրկ}$$

Տարեկան-(00,036գ/կվտժ × 53380կվտժ/տարի) /10⁶= 0,0019տ/տարի

SOx

0,504×445 =224,28գ/ժամ=0,06 գ/վրկ

Տարեկան-(0,504գ/կվտժ × 53380կվտժ/տարի) /10⁶= 0,027տ/տարի

Կախյալ մասնիկներ

0,021×445 =9,35գ/ժամ=0,0026 գ/վրկ

Տարեկան-(0,021գ/կվտժ × 53380կվտժ/տարի) /10⁶= 0,0011տ/տարի

10.2 Հողային ռեսուրսներ.

Գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման: Հողածածկը խճավազային գրունտ է ավազային և կավավազային լցոնով, մոխրագույն, տեղ-տեղ շագանակագույն, խոնավ, ծակոտկեն և խոռոչավոր, ավազային և խճային կառուցվածքի, մանր, տեղ-տեղ քիչ խոնավացած, խճի և տեղ-տեղ մանրաբեկորների պարունակությամբ:

Համաձայն նախագծային լուծումների՝ նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է կատարել 9424,55մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից կատարվելու է 2144.40մ³ ծավալի գրունտների լիցք, հետլիցք՝ 2918.70մ³. իսկ մնացած՝ 4361.45մ³ ծավալի հողային զանգվածը տեղափոխվելու է Մարտունու համայնքապետարանի կողմից հատկացված վայր՝ համայնքի համաձայնությամբ: Հողային աշխատանքները կատարվելու են ձեռքի մեխանիկական գործիքներով և մեխանիզմներով:

Հողային զանգվածն առաջանալու է շենքի հիմքերի փորման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Տարածքում բացակայում է հողաբուսաշերտը: Հողային զանգվածն ամբողջությամբ կուտակվելու է տարածքում՝ հատուկ առանձնացված տարածքում և մի մասն օգտագործվելու է հետլիցքի և հարթեցման համար:

Հողային ռեսուրսների վրա ազդեցությունները կբացառվեն հաշվետվությունում նախատեսված միջոցառումների կատարմամբ:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցություններ չեն նախատեսվում:

10.3 Ջրային ռեսուրսներ.

Համաձայն «Հայր և Որդի Տիտիզյաններ» ՄՊԸ-ի կողմից տրված ինժեներաերկրաբանական եզրակացության՝ գրունտային ջրերը գտնվում են ըստ հորատված հորատանցքների՝ 2.0մ-ից խորը հորզոններում: Գրունտային ջրերի մակարդակից ելնելով նախապես կատարվելու են հիմնահատակների ամրապնդման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքների ժամանակ աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով: Ջրցանի և տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է ջրցան մեքենաներով՝ ըստ պահանջի, պայմանագրային հիմունքներով: Շահագործման փուլում դպրոցի խմելու ջուրը կմատակարարվի Երանոս բնակավայրի

ջրամատակարարման համակարգից՝ պայմանագրային հիմունքներով:

Կեղտաջրերի հեռացում. շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող 1.5*2.2մ չափերի 1 բիոզուգարանից: Աշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

Շահագործման փուլում ջրամատակարարման համակարգը միանալու է համայնքի ջրամատակարարման համակարգին: Երանոս բնակավայրը կոյուղացված չէ, ուստի դպրոցի շահագործման փուլում տեղադրվելու է 100մ³/օր հզորության ավտոմատացված համակարգով օժտված մաքրման կայան՝ հերմետիկ հոր: Այն ապահովելու է կեղտաջրերի մաքրում մինչև 95%: Հորի կոնստրուկցիան իրականացվելու է B25 դասի անջրթափանց բետոնից: Պատերի արտաքին մակերեսը հիդրոմեկուսացվելու է երկշերտ բիտումային մածիկով: Ունենալու է օդափոխության խողովակ: Կեղտաջրերը հեռացվելու են կոյուղու պոլիէթիլենային բարձր խտության ծալքավոր խողովակներով՝ Ø150մմ: Բոլոր անհրաժեշտ տեղերում նախատեսված են կլոր հատվածքի ե/բ հավաքովի էլեմենտներից դիտահորեր: Տեղադրվելու է ստորգետնյա, ծածկվելու է 150մմ հաստության ավազային պաշտպանիչ շերտով:

Մաքրման արդյունքում առաջանալու է տիղմ, որը նստեցումից հետո վերադառնում է առաջին փուլ: Ավելցուկային տիղմը տեղափոխվելու է աղբավայր՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Պարզեցված ջուրն ինքնահոս հեռացվելու է ավազի շերտերով՝ ֆիլտրվում է: Այն կարելի է օգտագործել ոռոգման նպատակով:

10.4 Կենսաբազմազանություն.

Բուսական աշխարհ. նախատեսվող գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, երկար տարիներ օգտագործվել է որպես դպրոցի տարածք: Տարածքը ասֆալտապատ է, բուսածածկը բացակայում է:

Կենդանական աշխարհ. գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են կենդատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է կառուցապատված տարածքում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում:

10.5 Թափոններ.

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած խոշոր եզրաչափերի աղբ (ծածկագիր՝ 91200500 01 00 5)՝ (կարող է լինել ավազի, բետոնի, քարի և այլնի մնացորդներ՝ շինարարական աղբի տեսքով), ներառյալ քանդման փուլից առաջացող շինաղբը՝ 7726.9մ³ ծավալով:

- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 12420 կգ/տարի, շահագործման փուլում՝ 137520կգ/տարի:

- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝ 4361.45մ³:

- յուղոտված լաթեր(58200600 01 01 4)՝ 4կգ,

- յուղերով աղտոտված ավազ(յուղի պարունակությունը-15%-ից ցածր՝ (ծածկագիրը 31402303 01 03 4):

- ներկեր/ Լաքա-ներկանյութերի այլ թափոններ (ծածկագիր՝ 55502900 01 01 4)

- կարծրացված սոսնձի թափոններ(ծածկագիր՝ 55700600 01 01 4),

- Կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ՝ (ծածկագիր՝ 35131200 01 99 5):

Գործունեության ընթացքում առաջացող թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ պատկանում են 4 և 5-րդ դասերին:

Որոշ թափոններ(ներկեր, կարծրացված սոսինձ, յուղերով աղտոտված ավազ և այլն) քանակական գնահատումը կկատարվի Կապալառու կազմակերպության կողմից, ելնելով փաստացի արդյունքներից: Թափոնների փաստացի քանակների հաշվառումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 14.09.2066թ. N1343-Ն որոշմանապահանջներից ելնելով՝ առաջացող թափոնների փաստացի ծավալների հիման վրա:

Շինարարության փուլում շինարարական աղբը կուտակվելու է համպատասխան անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ, իսկ կենցաղային աղբը՝ 2 հատ աղբահավաք տարողության մեջ:

Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

n – աշխատողների թիվն է

$$M=45*120= 5400 \text{ կգ/տ կամ } 7,41\text{կգ/օր}$$

Շինարարությունը տևելու է 2,3 տարի, հետևաբար

$$M=5400*2.3= 12420\text{կգ/տ կամ } 17,06 \text{ կգ/օր (728 աշխատանքային օր)}$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի առավելագույն ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով դպրոցի առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ 382 աշակերտ/աշխատող: Շահագործման փուլում կենցաղային աղբի ծավալը կկազմի.

$$M=382*360= 137520\text{կգ/տարի կամ } 433.8\text{կգ/օր/տարվա աշխատանքային օրերի՝ } 317 \text{ օր/}$$

ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ՝ թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով:

10.6 Աղմուկ և թրթռում.

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏՍԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 90 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 70 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Շինարարության հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Քանի որ աղմուկ առաջացնող մեխանիզմներն աշխատելու են ոչ միաժամանակ, դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին, բնակավայրի տրանսպորտի շարժական ակտիվ գոտում, հետևաբար շինհրապարակում աշխատող մեխանիզմների աղմուկը կտարալուծվի ընդհանուր աղմուկի մեջ:

Հաշվարկների հիման վրա կարելի է եզրակացնել, որ բնակելի տարածքի համար 70 դԲ թույլատրելի չափի դեպքում շինարարական աշխատանքների աղմուկի առավելագույն մակարդակը (61-64դԲԱ) գտնվում է թույլատրելի նորմայի սահմաններում:

Հաշվի առնելով աղմուկ առաջացնող շինարարական տեխնիկայի աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Միաժամանակ համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և

շինհրապարակին հարակից տարածքներում շատ ցածր կլինի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերից:

Շահագործման փուլում նոր դպրոցի շենքի կառուցումը կնպաստի առավել անվտանգ, սեյսմակայուն, ժամանակակից լուծումներով դպրոցում աշակերտների դասավանդմանը:

10.7 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված բնական աղետների, սողանքների, հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շինտեխնիկայի վթարների հետ: Համաձայն «Հայր և Որդի Տիտիզյաններ» ՍՊԸ կողմից տրված ինժեներակառուցարարական եզրակացության՝ տեղամասը երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների տեսանկյունից պիտանի է կապիտալ շինությունների և բարենպաստ է կառուցապատման համար:

Ելնելով նախագծային լուծումներից, հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ՝ շինարարության և շահագործման փուլերի համար:

10.8 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Տարածքում առկա է Արցախյան պատերազմում զոհված ուսուցչին նվիրված հուշարձան, որը տեղափոխվելու է այլ վայր՝ համայնքի համաձայնությամբ: Գործունեության ենթակա և մոտակա տարածքներում բացակայում են այլ պատմամշակութային արժեք ունեցող և բնության հուշարձանները: Կառուցապատման ենթակա տարածքն երկար տարիներ կառուցապատված է եղել և Երանոս բնակավայրի վարչական տարաշքում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքների հետ:

Ուստի հնարավոր ազդեցություններ վերջիններիս վրա չի նախատեսվում:

Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

10.9. Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԿ-3-480* նորմերի:

Սոցիալական գործունեք.

Շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Շինարարության փուլում առավելագույն հերթափոխում աշխատելու է 45 մարդ, որից՝ 40 բանվոր, 5-ը տեխնիկական անձնակազմ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով:

Շինարարության ընթացքում առաջանալու են հարակից տարածքի բնակիչների տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգի խախտում չի նախատեսվում:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը շինարարության փուլում սոցիալական ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Շինարարության փուլում բացվելու են նոր աշխատատեղեր՝ մոտ 45 մարդու համար: Նոր դպրոցի կառուցումը նպաստելու է համայնքում բնակչության զբաղվածության աճին, նոր ժամանակավոր աշխատատեղերի ստեղծմանը, որոշակիորեն կնպաստի նաև համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

10.10 Էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն.

Դպրոցի նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12. 04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ Էներգախնայողության և Էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան, ներառելով՝ ջեռուցման, տաք ջրամատակարարման, օդափոխման, լուսավորության համակարգերը:

Դպրոցի Էներգաարդյունավետության համապատասխանության գնահատման համար պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված Է և (կամ) Զ1 ընթացակարգերի պահանջները:

Համաձայն նույն որոշման IX բաժնի 31 կետի՝ շենքերը շահագործման հանձնելուց կամ շուկա հանելուց առաջ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգով սահմանված Էներգաարդյունավետության պահանջներին համապատասխանության գնահատման՝ «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան: Նույն բաժնի 34 կետում միաժամանակ նշվում է Էներգաարդյունավետության սերտիֆիկատը տրամադրվում է Էներգետիկ փորձաքննության (աուդիտ) հիման վրա, որը ներառում է Էներգաարդյունավետությունն օպտիմալ կերպով բարելավելու վերաբերյալ առաջարկություններ՝ բացառությամբ այն դեպքի, երբ գործող Էներգաարդյունավետության պահանջների համեմատությամբ այդ բարելավումը նպատակահարմար չէ:

Շենքերի ջեռուցման, օդափոխման համակարգերի, ինչպես նաև շենքերը պատող կոնստրուկցիաների Էներգետիկ փորձաքննությունը (աուդիտ) իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան:

Հետևաբար շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվության փորձաքննության փուլում Էներգաարդյունավետության սերտիֆիկատի ներկայացման պահանջը պարտադիր

չէ:

Նոր կառուցվող դպրոցի և դրանց պատող կոնստրուկցիաները նախատեսվում է կառուցել ըստ նշված կանոնակարգի(N 426-Ն որոշում) IV գլխի պահանջների՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմանները, սենքերում համապատասխան միկրոկլիմային ներկայացվող Հայաստանի հանրապետությունում գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջները:

10.11 Լանդշաֆտ.

Գործունեության իրականացումը չի առաջացնելու լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, քանի որ այն կառուցվելու է գոյություն ունեցող կառուցապատված՝ նախկին դպրոցի տարածքում: Նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը տարածքի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ:

Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:

Նախատեսվող դպրոցի շենքը ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն է:

10.12 Բարեկարգում և Կանաչապատում

Շենքի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում՝ 433,50մ² մակերեսով բետոնե սալիկներով և բազալտե եզրաքարերով: Կառուցվելու է 120.80զմ հենապատ:

Նախատեսվում է 432.45մ² մակերեսով ռետինե ծածկով խաղաղաշտ, վազքուղի: Տարածքը ցանկապատվելու է 359.00զմ երկարության մետաղական ճաղաշարով՝ 2 հատ դարպասով: Դպրոցի ներտարածքային ճանապարհները նախատեսված են երկշերտ ասֆալտով՝ բազալտե եզրաքարերով: Տեղադրվելու են նստարաններ, ցայտաղբյուր, հեծանվային կայանատեղիներ:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 2146.90մ² մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ: Կանաչապատման աշխատանքները կատարվելու են ծառատնկման և սիզամարգերի միջոցով՝ համաձայն Մարտունու համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծի: Տնկվելու են կեղծ ռուբախ(ակացիա)՝ 8 հատ, հացենի՝ 11 հատ, բարդի՝ 5 հատ, եղևնի՝ 13 հատ, ընդհանուր՝ 37 հատ ծառեր: Նախատեսվում է սպորտաղաշտի կառուցում՝ 3100.20մ² մակերես խոտածածկով:

Կանաչապատման նախագիծը կներկայացվի համայնքապետարանի համաձայնեցմանը:

Կանաչապատման նպատակով օգտագործվող բուսահողը ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով:

Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է СНиП 2.04.02-84-ի համաձայն, այսինքն, $1m^2$ ոռոգման նպատակով անհրաժեշտ է 0,3-0,4լ ջուր, հետևաբար.

$$W = (M \times 0,4) \times m$$

Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի,

m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից,

հետևաբար,

$$W = 2146.900,4 \times 20 = 17175.2 \text{ լ/ջուր կամ } 17.2 \text{ մ}^3/\text{տարի ջուր (տարվա կտրվածքով):}$$

Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է գործունեության տարածքում տեղադրվող մաքրման կայանից դուրս եկող հոսքաջրերի հաշվին՝ **մ300մ տրամագծով դրենաժային խողովակներով:**

Ոռոգումը կատարվելու է կաթիլային եղանակով:

11. Շրջակա միջավայրի վրա ազդեցության վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը (Բնապահպանական կառավարման պլան)

Նախատեսվող գործունեության գնահատման հաշվետվությունում նախատեսվում է Բնապահպանական կառավարման պլան, որը սահմանում է Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Ծովագարդ բնակավայրի վարչական տարածքում ռեստորանի կառուցման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի, ինչպես նաև թափոնների կառավարման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ: Շինարարության և շահագործման փուլերում նախատեսվող միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

11.1 Օդային ավազան. Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,

- շինհրապարակը ցանկապատվելու է,

- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում,

- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով,

- շինհրապարակում սորուն նյութերը պահել ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ, ծածկել անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- բացառել տարածքում թափոնների բաց այրումը,
- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,

- բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացնել պարբերաբար ստուգումներ:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

Շահագործման փուլ.

- պահպանել կաթսայատնից արտանետվող գազերի թույլատրելի նորմերը,
- կաթսայատան սարքավորումները պահել սարքին վիճակում, կատարել օդային ավազան արտանետումների վերահսկողություն:

11.2. Հողային ռեսուրսներ.

Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահել շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտի մի մասն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,

- շինհրապարակն ապահովված է կլինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,

- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,

- նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,

- բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը:

- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում,

- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարել տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,

- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է բետոնասալ կամ մանրախիճ,

- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քայտուղերի արտահոսքի դեպքում, փոված մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով:

11.3.Ջրային ռեսուրսներ.

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,

- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան:

- ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,

- պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինադր, ժամանակ առ ժամանակ կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,

- նախապես կատարել հիմնահատակների, տեղադրվող ավազախճային լիցքային գրունտների ամրապնդման աշխատանքներ՝ հիմքերի ջրաթափանցելիությունը նվազեցնելու նպատակով,

- դրենաժային համակարգի կառուցում, ելնելով դպրոցի տարածքի մեծ թեքության ռելիեֆային պայմաններից և գրունտային ջրերի մակարդակի իջեցման անհրաժեշտությունից,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համապատասխան մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,

- բետոնի լցվածությունն ապահովել այպես, որպեսզի բետոնանյութը տեղափոխելիս այն չթափվի ճանապարհներին:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարանից:

- Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից:

- Շինարարության ավարտից հետո այն ապամոնտաժվելու է:

Շահագործման փուլում դպրոցի ջրամատակարարման համակարգը միացվելու է համայնքային ջրատարին: Իսկ ջրահեռացման համակարգի համար տեղադրվելու է մաքրման կայան: Այն ապահովելու է կեղտաջրերի մինչև 95% մաքրում: Մաքրված տիղմը տեղափոխվելու է աղբավայր՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

11.4.Թափոններ.

Թափոնների կառավարման նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,

- շին հրապարակի տարածքում կհստակեցվի շին աղբի նախնական կուտակման վայրը,

- շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,

- փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր,

- մետաղական մասերն կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 2 հատ 1,5x1մ³ չափերի պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ,

- կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,

- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- բացառվելու է աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ բնակելի և հասարակական տարածքներում,

- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 6 հատ 1,5x1մ³ տարողության պլաստմասե աղբամաններ: Տեղադրվելու են նաև տեսակավորման աղբամաններ:

- տանիքում տեղադրվող վահանակների շարքից դուրս գալու դեպքում այն չտեղակայել բաց տարածքներում՝ ուղիղ արևի ճառագայթների տակ,

- շարքից դուրս եկած վահանակները տեղակայել փակ տարածքում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը կամ փոխանակելը:

11.5.Աղմուկ և թրթռում.

Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,

- շինարարական աշխատանքներում ներգրավվել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,

- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,
- պարբերաբար ստուգվել և կարգաբերել տրանսպորտային միջոցների շարժիչները,
- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- պահպանել աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը:

Շահագործման փուլում նախատեսվում է.

- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,
- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

11.6.Արտակարգ իրավիճակներ.

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի գնումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,

- տեղադրել տեղեկատվական ցուցանակներ, որը ներառի շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն,

- շինհրապարակը կազմակերպել հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով,

- շինհրապարակն ապահովվել հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,

- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ մաքրել հրդեհավտանգ և պայթուցավտանգ թափոններից և աղբից,

- հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

- բաց պահել նախատեսված ջրադրյունների ճանապարհները, տեղադրել դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ,

- տեղադրել ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,

- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

Շահագործման փուլ. Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է.

- ստորգետնյա հարկերը ծառայելու են որպես պարզագույն թաքստոց՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանական նպատակներով,

- ստորգետնյա հատվածում՝ ապաստարանի համար նախատեսվում է վթարային ելք,

- շահագործման փուլում մասնաշենքերի բոլոր հարկերն ապահովված են լինելու հրշեջ ծորակներով, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակաձիսային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով,

- պահպանել հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար,

- աստիճանավանդակի, վերելակի դռները լինելու են հակահրդեհային՝ այլումինե, ինքնափակվող, հրակայուն ապակեփաթեթով, հիդրավլիկ ինքնաձեռնարկով:

11.7. Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում, անվտանգություն.

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր գոնանները կցանկապատվեն,

- պահպանել ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- պահպանել Առողջապահության նախարարի 28 մարտի 2017թ. «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ» N 2.2.4-016-17 ՄԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 82 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 12-Ն հրամանի պահանջները,

- ապահովվել աշխատողների անվտանգությունը՝ բարձրության վրա,

- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,

- բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ,

- ստուգվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրել առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ,

- աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,

- ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնեության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,

- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,

- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- բացառել ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս,

- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,

- տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,

- շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս,

- շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, հոսանքատար մասերի մեկուսացում,

- վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար:

Շահագործման փուլ.

Շահագործման փուլում շենքն ապահովված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/-11.07.01-2006 շինարարական նորմերին համապատասխան:

Մասնավորապես նախատեսվում է.

- ապահովված է լինելու հաշմանդամների պահանջմունքին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով,

- վերգետնյա և ստորգետնյա անցումներ, թեքահարթակներ,

- տարածքի մուտքը կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

Սոցիալական գործոններ.

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,
- բացառել շինհրապարակից դուրս կենցաղային աղբի և շինաղբի, մեքենաների կուտակումները,
- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:
- Նոր դպրոցի շենքի կառուցումը նպաստելու է.
- դպրոցականների համար նոր արդիական, սեյսմակայուն ապահովվածությամբ դպրոցի կառուցմանը, դպրոցական միջավայրի բարելավմանը:

11.8. Էներգաարդյունավետություն և էներգախնայողություն.

Դպրոցի էներգաարդյունավետության և էներգախնայողության ապահովման նպատակով շենքերը կկառուցվեն.

- շենքի արտաքին պատերը երեսապատվելու են 200մմ հաստությամբ խարամաբետոնե անցքավոր բլոկներից, ջերմամեկուսացված՝ 100մմ հաստությամբ հանքաբամբակի սալերով:
- Պատերը պաշտպանված են լինելու հողմաջրապաշտպան թաղանթով:
- Երեսապատվելու են կախովի օդափոխվող ճակատներով՝ 12մմ հաստության ֆիբրոցեմենտե սալիկներով:
- Կպահպանվեն հրակայուն և անջրաթափանց, գոլորշակայուն և գոլորշամեկուսիչ, ջերմամեկուսիչ նյութերի նորմերը:
- Սասնաշենքերի մուտքերն ու ելքերը լինելու են ջերմամեկուսիչ և հերմետիկ փակվող դռներով և պատուհաններով:
- լուսավորությունը կատարվելու է լեդ տեսակի լամպերով:

11.9. Լանդշաֆտ.

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,
- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը,
- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

11.10. Բարեկարգում և կանաչապատում.

Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում,
- կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով,
- նորատունկ բուսականության, ծառերի չկայչելու դեպքում նոր ծառատեսակներով փոխարինում:

12. Մոնիթորինգ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում:
- Բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիով:
- Բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին իրազեկման վերահսկում:
- Տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատած անհամապատասխանությունները:
- Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանման վերահսկում:
- Թափոնների տեղափոխման կազմակերպման վերահսկում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա:
- Կապալառուի կողմից նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացման վերահսկում:
- Ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար և դիտողական ստուգում:
- Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով:
- Շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:
- Արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում:
- Շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանման վերահսկում:

- Բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացման վերահսկում, ապահովելով կանաչապատ տարածքի համապատասխանությունը կանաչապատման նախագծին:
- Կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի կաչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովվելու նպատակով:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

13.Բողոքների ընթացակարգ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

Շինարարական բոլոր տեղամասերում ապահովվելու է պաստառների առկայությունը, որը ներառելու է տեղեկատվություն Պատվիրատուի, Կապալառուի կոնտակտային տվյալները, շինարարության պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները:

14.Փակման փուլ.

Ելելով նախատեսվող գործունեության առանձնահատկությունից, փակման փուլ չի նախատեսվում:

15. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

Աղյուսակ 9

<p>1</p>	<p>Օդային ավազան</p>	<p>Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան, - շինհրապարակը ցանկապատված է, - մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում, - գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով, - շինհրապարակում սորուն նյութերը պահել ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ՝ ծածկել անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, - բացառել տարածքում թափոնների բաց այրումը, - օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում, - բացառել անսարք վիճակում գտնվող և 	<p>Կապալառու</p>	<p>«Բարայան-Լատ Նախագիծ» ՍՊԸ</p>
----------	-----------------------------	--	-------------------------	---

		արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:		
2	Հողային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահել շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, - շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտի մի մասն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, - շինհրապարակն ապահովվել արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար, - շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա, - նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը, - շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և 	Կապալառու	«Բարայան-Լատ Նախագիծ» ՍՊԸ

		<p>տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,</p> <ul style="list-style-type: none"> - այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է բետոնասալ կամ մանրախիճ, - մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փոխված մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով, - մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում, - բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը: 		
3	Ջրային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.</p> <ul style="list-style-type: none"> - փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր, - անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում 	Կապալառու	«Բարայան-Լատ Նախագիծ» ՍՊԸ

		<p>տեղադրվող պարզարան,</p> <ul style="list-style-type: none"> - ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը, - պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինադր, ժամանակ առ ժամանակ տեղափոխվելու է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով, - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով, - ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր, - նախապես կատարել հիմնահատակների, տեղադրվող ավազախճային լիցքային գրունտների ամրապնդման աշխատանքներ՝ հիմքերի ջրաթափանցելիությունը նվազեցնելու նպատակով, - դրենաժային համակարգի կառուցում, ելնելով դպրոցի տարածքի մեծ թեքության ռելիեֆային պայմաններից և գրունտային ջրերի մակարդակի իջեցման անհրաժեշտությունից, - շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում, 		
--	--	---	--	--

		<p>Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում գոյություն ունեցող սանհանգույցից: Շահագործման փուլում. - դպրոցի ջրամատակարարման համակարգը միացվելու է համայնքային ջրատարին: - Կոմունալ-կենցաղային հոսքաջրերի և կեղտաջրերի հեռացումը կատարվելու է մաքրման կայանի՝ սեպտիկ հորի միջոցով: 		
4	Թափոններ	<p>Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից, - շին հրապարակի տարածքում կհստակեցվի շին աղբի նախնական կուտակման վայրը, - շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ 	Կապալառու	«Բարայան-Լատ Նախագիծ» ՍՊԸ

	<p>տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,</p> <ul style="list-style-type: none"> - փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր, - մետաղական մասերն կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով, - կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 2 հատ 1,5x1մ³ չափերի պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ, - կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, - շինաղբի տեղափոխումը կատարել փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, - բացառել աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ բնակելի և հասարակական տարածքներում, - շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի 		
--	--	--	--

